*Աբրշում բուրդը գզեմ,*
*Յար, մաջալ տուր, քեզի կառնեմ։*

*Ոչխարն ու էծը կըթեմ,*
*Խնոցու մեջը լցնեմ,*
*Քաղցրահամ կարագ հանեմ,*
*Յար, մաջալ տուր, քեզի կառնեմ։*

## 63. ԳԸՆԱ ԲԱՆԱԿ

(Հոկտ. շրջ., կոնսերվի գործ.)

*Ես ինչ անեմ, դու արիր,*
*Ջան, ջահել տղա,*
*Գնա բանակ,*
*Քեզ ասելու բան չունեմ։*
*Զոռով դարդի տեր արիր,*
*Բանակից եկար,*
*Քեզ առնելու*
*Ուխտ ու նպատակ ունեմ։*

*Սարերը սըրով գնաց,*
*Ջան, ջահել տղա,*
*Գնա բանակ,*
*Քեզ ասելու բան չունեմ,*
*Իմ յարը խըռով գնաց,*
*Բանակից եկար,*
*Քեզ առնելու*
*Ուխտ ու նպատակ ունեմ։*

## 64. ԱՐԵՎՆ ԵԼԱՎ

(Հոկտ. շրջ., կոնսերվի գործ.)

*Արևն ելավ, գարուն բացվեց,*
*Ջյունը հալվեց մեր սարի,*
*Նոր կարոտով սիրտըս լցվեց,*
*Գիր ստացա իմ յարից։*
*Գրում է, թե՝ յար, քեզ տեսա*
*Էս գիշեր երազումըս,*
*Հարսանիքի շորեր հագած*
*Դեպի ինձ էիր վազում։*

*Երբ լուսացավ, նորից թընդաց,*
*Էն իմ տանկըն ահարկու,*
*Կրակ բացեց ու գղրդաց,*
*Սարսափ պատեց թշնամուն։*
*Կոլխոզային դաշտերում ծով,*
*Պառկած եմ ես ծաղկանց մեջ.*
*Սերըդ կրծքիս աշխատում եմ.*
*Եվ սպասում քեզ անվերջ։*

## 65. ԱՄԱՆ ՅԱՐ ՋԱՆ

(Կոնսերվի գործարան)

*Մերս կերավ եղեգն,*
*Աման յար, յար, աման յար,*
*Ինձի բերեց հրեղեն,*
*Գնա բանակ, արի տար։*

*Մերս կերավ մառ սոխ,*
*Աման յար, յար, աման յար,*
*Ինձի բերեց երդ տաղ,*
*Գնա բանակ, արի տար։*

*Մերըս կերավ թթու թան,*
*Աման յար, յար, աման յար,*
*Ինձի բերեց ճովտան,*
*Գնա բանակ, արի տար։*

## 66. ՔԱՂՀԱՆԻ ՄԱՐԳԸ ՓՈՒՇ Ա

(Հոկտ. շրջան, կոնսերվի գործարան)

*Քաղհանի մարգը փուշ ա,*
*Յար, նայ, նայ, նայ, նայ, նայ,*
*Սեր ու սովդեն անուշ ա,*
*Գյուլում նանայ, նանայ։*

*Բարակ բարդու ծերին եմ,*
*Խոսք եմ տվել, տերին եմ։*

*Բարակ ես, բարդու ծառ ես,*
*Կրակ ես, մարդ կվառես։*

*Կրակովըդ չեմ վառվի,*
*Սիրուցըդ ես չեմ տանջվի։*

## 67. ԲԱՂ ԿԱ, ԲԱՂԻ ՆՄԱՆ ՉԻ

(Հոկտ. շրջ., կոնսերվի գործարան)

*Բաղ կա, բաղի նման չի,*
*Լար կա, լարի նման չի,*
*Այդքան գալիս անցնում են,*
*Մեկն իմ ախպոր նման չի։*

*Բաղ ու բոստանին մեռնեմ,*
*Գիր ու գալամին մեռնեմ,*
*Իմ ախպոր սոլին մեռնեմ,*
*Կարմիր բանակ եմ ղրկել։*

## 68. ԲԻՆԳՅՈԼ

(Հոկտ. շրջ., կոնսերվի գործարան)

*Երբ բաց եղան գարնան կանաչ գլուխները,*
*Քընար դառան աղբյուրները Բինգյոլի,*
*Շարվե-շարան անցան զուգված ուղտերը,*
*Յարս էլ գընաց յայլաները Բինգյոլի։*

*Անգին յարիս լույս երեսին կարոտ եմ,*
*Նազուկ մեջքին, ծով ծամերին կարոտ եմ,*
*Քաղցր լեզվին, անուշ հոտին կարոտ եմ,*
*Սև աչքերով էն եղնիկը Բինգյոլի։*

*Պաղ-պաղ ջրեր, պապակ շուրթըս չի բացվի,*
*Ծուփ-ծուփ ծաղկունք, լացող աչքըս չի բացվի,*
*Դեռ չըտեսած յարիս սիրտը չի բացվի,*
*Ինձ ինչ, ավաղ բլբուլները Բինգյոլի։*

*Մոլորվել եմ, ճամփաներին ծանոթ չեմ,*
*Բյուր լըճերին, գետ ու քարին ծանոթ չեմ,*
*Ես պանդուխտ եմ, էս տեղերին ծանոթ չեմ,*
*Քայրիկ, սաս, որն է ճամփան Բինգյոլի։*

*Խոսք՝* Ա. Իսահակյանի
*Եղանակը հորինել է* Վիլյա Մարգարյանը

## 69. ԸՆԿԱ ՋՈՒՐԸ, ԳՆԱՑԻ

(Հոկտ. շրջ., կոնսերվի գործ.)

*Ընկա ջուրը, գնացի,*
*Պաղ աղբյուր, զուլալ ջուր,*
*Լից բաժակը, բեր ինձ տուր,*
*Խեղդվելով մնացի,*
*Խըմեմ ես, հովանամ,*
*Թե մեռնեմ, քոռանամ։*

*Մեր տան կտուրը ժեշտ ա,*
*Տղա խաբելը հեշտ ա։*

*Խնձոր գցի, նուռ եկավ,*
*Յարըս մեր տան հյուր եկավ։*

## 70. ՍԱՐԵՐԸ ՍԻՐՈՎ ԳՆԱՑ

(Կոնսերվի գործարան)

*Սարերը սիրով գնաց,*
*Նա ինձ ման գալու գնաց,*
*Ոչ մի տեղ ինձ չգտավ,*
*Ափսոս, ինձնից*
*Խռով մընաց,*
*Թողեց մենակ ու գնաց։*

*Ծառս եմ տընկել գիլասի,*
*Բամին տա բաղի-բաղի,*
*Վերի մաչլի էն տղեն,*
*Նրա վրան*
*Աչք եմ դրել։*
*Գիշերը գա երազի։*

## 71. ԱՆՁՐԵՎՆ ԵԿԱՎ

(Կոնսերվի գործարան)

*Սարումը սարվոր անեմ,*
*Անձրև եկավ*
*Շըխ-շըխկալեն,*
*Ես տեսցի՝ գետ էր,*
*Բրիգադիր յար անեմ,*
*Երևանից գնացք եկավ,*
*Իմ յարը միջին էր։*

*Բեր արտերը բարի ա,*
*Անձրև եկավ*
*Շըխ-շըխկալեն,*
*Ես տեսցի՝ գետ էր.*
*Բերքով առատ տարի ա,*
*Երևանից գնացք եկավ,*
*Իմ յարը միջին էր։*

## 72. ՋԱՆԻԿ ՆԱՆԱՐ

(Կոնսերվի գործարան)

*Ես քեզ քցեմ, դու բռնես,*
*Ոչ մի բալոն չըկոտրես,*
*Հանիկ նանար, նիկ նանար,*
*Ջանիկ նանար, նիկ նանար։*

*Տո լրի լոլ լո, լրի լոլ լո, լրի լոլ,*
*Լո լրի լոլ լո, լրի լոլ։*
*Հանիկ նանար, նիկ նանար,*
*Ջանիկ նանար, նիկ նանար։*

## 73. ԵՐԿՈՒ ՔՈՒՅՐ ԵՆՔ

(Հոկտ. շրջ., կոնսերվի գործ.)

*Երկու քույր ենք մի բոյի,*
*Ծառի վրից*
*Երկու ծիրան*
*Մի պոկի,*
*Սիրել ենք մեր գեղի,*
*Երկու քույր ենք,*
*Երկուսըս էլ*
*Մի բոյի։*

*Շերեփը յուղի միջին,*
*Ծառի վրից*
*Երկու ծիրան*
*Մի պոկի,*
*Սիրածըս գյուղի միջին,*
*Երկու քույր ենք,*
*Երկուսըս էլ*
*Մի բոյի։*

*Օթախը լիքը մուխ ա,*
*Ծառի վըրից*
*Երկու ծիրան*
*Մի պոկի,*
*Սիրածըս տղեն թուխ ա,*
*Երկու քույր ենք,*
*Երկուսըս էլ*
*Մի սոյի։*

*Իմ յարը շատ կոլոտ ա,*
*Ծառի վրից*
*Երկու ծիրան*
*Մի պոկի,*
*Ինչքան նայես, խորոտ ա։*
*Երկու քույր ենք,*
*Երկուսս էլ*
*Մի բոյի։*

## 74. ՀՈՅ ՅԱՐ ՋԱՆ

(Հոկտ. շրջ., կոնսերվի գործ.)

*Մեր գավոզի տրուբեն,*
*Հոպ յար ջան, ելակըդ,*
*Թող լավ եփի մուրաբեն,*
*Օղեմ, կոճկեմ,*
*Սադաֆ շարեմ,*
*Ձեռըս քցեմ,*
*Ձեռըդ բռնեմ,*
*Բիլակըդ,*
*Հոպ յար ջան, բիլակըդ,*
*Աղջի, ինչ է գիլակըդ։*

*Մերըս կերավ մոռ սոխ,*
*Հոպ յար ջան, ելակըդ*
*Ինձի բերեց երդ աստղ,*
*Օղեմ, կոճկեմ,*
*Սադաֆ շարեմ,*
*Ձեռըս քցեմ,*
*Ձեռըդ բռնեմ,*
*Բիլակըդ,*
*Հոպ յար ջան, բիլակըդ.*
*Աղջի, ինչ է քո միտքըդ։*

## 75. ԿՈՆՍԵՐՎԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ

(Հոկտ. կոնսերվի գործարան)

*Կոնսերվի գործարանը,*
*Ալի բուն, ալի բուն,*
*Ալ ալյուխս էստեղ ա,*
*Կեցցե հերոս Շուշանը,*
*Ալի բունն ինչ ա,*
*Դաստախուն քեչա,*
*Ես դոնախ եմ,*
*Յարո ջան:*

*Գնացի կալը հաշան,*
*Ալի բուն, ալի բուն,*
*Ալ ալյուխըս էստեղ ա,*
*Մատնիքըս գըրի նշան.*
*Ալի բունն ինչ ա,*
*Դաստախուն քեչա,*
*Խաս դումաշով*
*Յարո ջան:*

## 76. ՔԱՄԻՆ ԵԿԱՎ

(Հոկտ. շրջ., կոնսերվի գործ.)

*Սարին կըրակ եմ արել,**
*Քամին եկավ, յարըս չեկավ, ամա՜ն,*
*Յարիս ջուղաբ եմ արել*
*Բաղումն արի, որ մամաս չիմանա,*
*Որ իմանա, մեր գլխանը նականա:*

*Սարի կըրակը հանգավ,*
*Քամին եկավ, յարըս չեկավ, յաման,*
*Քո սերն իմ սիրտը ընկավ:*
*Բաղումն արի, որ մամաս չիմանա,*
*Որ իմանա, մեր գլխանը կանա:*

## 77. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՇՐՋԱՆԸ ՄԵՐ

(Հոկտեմբերյանի շրջկենտրոն)

*Հոկտեմբերյան շրջանը մեր*
*Ունի հարուստ բերրի դաշտեր,*
*Ջրանցքային բամբակ ունի,*
*Մեղրից համեղ խաղող ունի:*

*Եկեք հիմա ուրախ երգենք,*
*Մեր շրջանի բերքը գովենք,*
*Քառասուն մեկ հերոսների*
*Գովքը անենք մեծ գործերի:*

*Հազարագույն նեկտարաբույր,*
*Ծաղիկներից փնջեր հյուսենք,*
*Հայաստանի հեզահամբույր*
*Երեք տասնյա փառքը գովենք:*

Կրկնակ:

*Երեք տասնյա մեծ պայքարի*
*Սոցիալիզմի ուղին բռնենք,*
*Հերոսներով մեր քաջարի*
*Երջանիկ կյանք կառուցենք:*

Կրկնակ:

---

*) Վարիանտը սկսվում է հետևյալ տողերով՝

*Սարին կըրակ եմ արել,*
*Յարիս ջուղաբ եմ արել:*

## 78. ԽԱՂՈՂԸ ՔԱՂԵՑԻ

(Հոկտեմբերյանի շրջկենտրոն)

*Խաղողը քաղեցի,*
*Խաղողը քաղեցի,*
*Լցրի ողին չառա՝*
*Կոմսոմոլին սիրեցի:*

*Թաշկինակիս մեկը,*
*Թաշկինակիս մեկը,*
*Ուրախ սրտով, յար ջան,*
*Դիր կոստյումիդ ջեբը:*

*Մարգերի ալորը,*
*Մարգերի ալորը,*
*Ես ու յարըս ման գանք*
*Բաղերի բոլորը:*

## 79. ՄԻ ԱՆՈՒՇ ՅԱՐ ՈՒՆԵՄ

(Հոկտեմբերյանի շրջան)

*Հեռու տեղ յար ունեմ,*
*Ծաղկած սար ունեմ,*
*Հոտավետ մի վարդ է,*
*Բուրմունքին մեռնեմ,*
*Չի գալիս որ տեսնեմ,*
*Կարոտըս առնեմ:*

*Արի, յար, արի,*
*Քո սիրած աղջիկն եմ,*
*Քո ճամփին*
*Շուշան, մեխակ,*
*Նարգիզ կըցանեմ...*

*Վաու, անուշ գարուն է,*
*Վարդեր են բացվել,*
*Ամեն վարդ բացվելիս,*
*Միշտ քեզ եմ հիշել,*
*Աչքըս ճամփիդ պահել,*
*Քեզ եմ սպասել:*

*Արի, յար, արի,*
*Քո սիրած աղջիկն եմ,*
*Քո ճամփին*
*Շուշան, մեխակ,*
*Նարգիզ կըցանեմ...*

## 80. ԾԻՐԱՆԸ ԶԱԼՈՒ Ա

(Հոկտեմբերյանի շրջան)

*Սիրել եմ, արի գնալ,*
*Ծիրանը չալու ա,*
*Տարար իմ կյանքի կեսը.*
*Յար, յար.*
*Յարիս նամակն եկավ,*
*Գրել ա, գալու ա,*
*Գրել ա, գալու ա:*

*Մտա բաղը ջոկեցի,*
*Ծիրանը չալու ա,*
*Կարմիր խնձոր պոկեցի:*
*Յար, յար,*
*Յարիս նամակն եկավ,*
*Գրել ա, գալու ա,*
*Գրել ա, գալու ա:*

*Ախպերս ա կալնե շոշին,*
*Ծիրանը չալու ա,*
*Ոսկե մեդալը գոշին,*
*Յար, յար,*
*Յարիս նամակն եկավ,*
*Գրել ա, գալու ա,*
*Գրել ա, գալու ա:*

## 81. ՆԻԳՅԱՐՍ ՏԱՐԱՆ

(Հոկտեմբերյանի շրջկենտրոն)

*Դու կայնել ես սարի պես,*
*Հեռացել ես յաղի պես,*
*Սիրել եմ, պըտի առնեմ,**
*Ինչու հեռացար էդպես։*
*Վայ, վայ, Նիգյարս տարան,*
*Քանդին, չիգյարս տարան։*

*Տղա, անունդ Հովհաննես,*
*Սարերը սեյրան կաննես,*
*Ար ու ամոթ ունենաս,*
*Կգաս յարիդ կտաննես։*
*Վայ, վայ, Նիգյարիս տարան,*
*Քանդին, ջիգյարըս տարան։*

## 82. ԱԿԱՆՋ ԴԻՐ

(Հոկտ. շրջկենտրոն)

*Ականջ դիր, բան եմ ասում,*
*Սրտիցըս քեզ սեր եմ ասում,*
*Հերիք է ինձի չարչարես,*
*Սիրուն յար ջան, քեզ եմ ասում։*

*Մեռնեմ էդ լուս աչերիդ,*
*Երկնակամար սև ունքերիդ,*
*Հերիք է ինձ դու չարչարես,*
*Սիրուն յար ջան, քեզ եմ ասում։*

*Քեզ սիրելը հեշտ բան չէ,*
*Մարդու հոգին կտանջե,*
*Հերիք է կյանքըս մաշես,*
*Սիրուն յար ջան, քեզ եմ ասում։*

## 83. ՄԵՐ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

(Հոկտեմբ. շրջկենտրոն)

*Մեր Կարմիր Բանակը*
*Թող ծլի, ծաղկի,*
*Անվախ հերոսի պես*
*Սահմանը պահի։*

*Մեր Կարմիր Բանակը*
*Պողպատե բալնիք,*
*Բաց կանի դռները*
*Ժայռ ու անառիկ։*

*Մեր Կարմիր Բանակը*
*Լուսատու աստղ է,*
*Ֆաշիզմին կործանող*
*Ահարկու զենք է։*

---

*) Վարիանտ։

## 84. ՀՈԳՈՎ, ՍՐՏՈՎ ՍԻՐԵՑԻ

(Հոկտեմբ. շրջկենտրոն)

*Հոգով, սրտով սիրեցի,*
*Աման, աման,*
*Աման, աման լանդի,*
*Վերջը քեզ առնելու եմ.**
*Իսալի դուման,*
*Թիփի բորան;*
*Դաղլարըմ լանդի։*

*Ես միտ եմ, խորամիտ եմ,*
*Ես քո մուքերը գիտեմ.*

*Մուքինըդ մուքիդ մընա,*
*Ճամփորդ ես, ճամփեդ գնա։*

*Ես էստեղ իպար չեկա,*
*Քո սիրուդ համար եկա։*

## 85. ԵՍ ԻՆՉ ԱՆԵՄ

(Հոկտեմբեր. շրջկենտրոն)

*Ես ինչ անեմ, դուն արիր,*
*Խանում է, ջան է,*
*Ջոռով դարդի տեր արիր,*
*Սիրուն է, ջան է,*
*Յար է, ջան է, յար է, ջան է,*
*Խանում է, ջան է,*
*Սրտով սիրած է,*
*Խանում է, ջան է։*
*Մարալ է, ջան է։*
*Համ սիրեցիր, համ առեցիր,*
*Սերըդ սրտիցըս հանեցիր։*

---

*) Վարիանտ։

## 86. ԹԱՇԿԻՆԱԿԻՍ ՄԵԿԸ

(Հոկտեմբեր. շրջկենտրոն)

*Թաշկինակիս մեկը,*
*Թաշկինակիս մեկը,*
*Ուրախ սրտով, յար ջան,*
*Դիր բոլորիդ չերը:*

*Խաղողը քաղեցի,*
*Խաղողը քաղեցի,*
*Լոզըր ողին չաստ,*
*Կոմսամոլին սիրեցի:*

*Մարգերի օլորը,*
*Մարգերի օլորը,*
*Յարըս ման էր գալիս,*
*Բեռլինի բոլորը:*

## 87. ՍԵՌԻ ԲԼՈՒԶՈՎ ՏՂԱ

(Հոկտեմբ. շրջկենտրոն)

*Ամպել ա ամպի տակին,*
*Սեռի բըլուզով տղա,*
*Արի մեր տանը,*
*Շաքարը սանդի տակին,*
*Մենք որ իրար առնենք,*
*Բախտավոր կապրենք:*

*Խմել ես նաան գինին,*
*Սեռի բըլուզով տղա,*
*Արի մեր տանը,*
*Հոտ քաշել մանուշակին,*
*Մենք որ իրար առնենք,*
*Բախտավոր կապրենք:*

## 88. ԼՈՅ, ԼՈՅ

(Հոկտեմբ. շրջկենտրոն)

*Լոյ, լոյ, լոյ, լոյ,*
*Ջաղացըս հատիկ-հատիկ,*
*Ջան, ջան, ջան, ջան,*
*Երեսըդ նըռան հատիկ:*

*Լոյ, լոյ, լոյ, լոյ,*
*Սիրտն ես համով, հոտով,*
*Ջան, ջան, ջան, ջան,*
*Կարմիր ծաղիկ խորոտիկ:*

*Քնեցի, երազ տեսա,*
*Հանդերը վառած տեսա,*
*Տղա, Թասիրըդ մեռնի,*
*Քո յարին տարած տեսա:*

## 89. ՍԱՐԻ ԼԱՆՋԻՆ

(Հոկտեմբեր. շրջկենտրոն)

*Սարի լանջին ծաղիկ ես,*
*Համով, հոտով մեխակ ես,*
*Ջան, ջան, մեխակ ես,*
*Ջան, ջան, մեխակ ես։*

*Բացված վարդի հոտ ունես,*
*Թըշիդ վրա խալ ունես,*
*Ջան, ջան, խալ ունես,*
*Ջան, ջան, խալ ունես։*

*Ալ տղա, ձորով արի,*
*Կանաչ լանջով սարերի,*
*Ջան, ջան, սարերի,*
*Ջան. ջան, սարերի։*

## 90. ՅՈՒՎԱՐԱՇ ԱՎՉՅԱՆ

(Հոկտեմբերյանի շրջկենտրոն)

*Երգում եմ ես ձեզ,*
*Դուք լավ լսեցեք,*
*Պատմում եմ ես ձեզ,*
*Ականջ դըրեցեք,*
*Լըսեք իմ երգին,*
*Տողերը ի՞նչ է,*
*Մեր լավ հերոսի*
*Գովքի մասին է,*
*Բոլորն են ուզում*
*Լինել քեզ նման,*
*Դու մեր սիրելի*
*Յուվարաշ Ավչյան։*

## 91. ՋԱՐԿԵՆՔ, ՄԱՐԳԵՐԸ ՀԱՆԵՆՔ

(Հոկտեմբերյան գյուղ)

*Ջարկենք, մարգերը հանենք,*
*Լոյ, լոյ, լոյ, լոյ,*
*Բամբակը մեկ-մեկ անենք,*
*Յար իմ, լոյ, լոյ։*

*Բամբակը լավ ու բար ա,*
*Յարըս թազա նուբար ա։*

*Բաղհան անեմ, չանաքեմ,*
*Աշնանն ախպորըս կարգեմ։*

*Շատ հավաքենք բամբակը,*
*Տանք մեր պետության պարտքը։*

## 92. ՄԵՐ ՃԱՄՓԵՆ

(Հոկտեմբերյան գյուղ)

*Մեր ճամփեն բարի ճամփա,*
*Եղբորս սարի ճամփա,*
*Կամերիս ազնիվ ընկեր,*
*Բարևը սրտիս մընա:*

*Արևը հողի վրա.*
*Պաթմանը շաղի վրա,*
*Կամերիս սիրուն ազա,*
*Բարևըդ սրտիս մընա:*

*Դու գարնան մանուշակ ես,*
*Քաղցր ես, անուշակ ես,*
*Կամերիս ազնիվ ազա,*
*Բարևըդ սրտիս մընա:*

## 93. ՀԵՐՈՍ ՀՈՒՆԱՆԻ ԵՐԳԸ

(Հոկտեմբ. շրջան, 3-րդ սովխոզ)

*Մասնակցեցիր Հայրենական Մեծ կռվին*
*Եվ այդ կռվում հաղթեցիր դու թշնամուն'*
*Միշտ կհիշենք լըրանալուց այդ տարին,*
*Բարեկամը դու մեր Կարմիր Բանակի:*

*Մանուկները միշտ կհիշեն քո մասին,*
*Պիոնները միշտ կերգեն հերոսին,*
*Եվ բազմազգ ժողովուրդը միասին*
*Միշտ կհիշեն անմահ ու քաջ հերոսին:*

*Ազգանունըդ Ավետիսյան, քաջ Հունան,*
*Քաջությունըդ զարմանք թըվաց մարդ-*
*կության.*
*Գընդացրի անցքը փակիր քո կըրծքով,*
*Միշտ կըհիշենք քո անունը, քաջ Հունան:*

## 94. ԲԻԼԲՈՒԼ

(Հոկտեմբերյան գյուղ)

*Մի յար ունեմ նախագահ,*
*Բիլբուլ, բիլբուլ.*
*Ամեն բանից անդյակ ա,*
*Սարերի սըմբուլ:*

*Մի յար ունեմ բրիգադիր,*
*Բիլբուլ, բիլբուլ,*
*Ամեն բանին աշադիր,*
*Սարերի սըմբուլ:*

*Մի յար ունեմ ուսուցիչ,*
*Ոչ թուղթ ունի, ոչ գրիչ:*

*Մի յար ունեմ մաշինիստ,*
*Գործի մեջ նա շատ է խիստ:*

## 95. ՀՈՎ ԱՅՎԱՆԸ ՄՏԵԼ ԵՄ

(Հոկտեմբ., 3-րդ սովխոզ)

Հով այվանին քնել եմ,
Քյալագյարխին կապել եմ,
Վըրից թափի վարդի ջուր,
Իմացիր քըրտընել եմ։

Ջան, ջան, գյուլում ջան,
Գյուլում, գյուլում, գյուլում ջան,
Գյուլում, գյուլում, գյուլում,
Գյուլում, գյուլում ջան։

## 96. ԱՂԲՐԻ ԳԼԽԻՆ

(Հոկտեմբ. շրջ., 3-րդ սովխոզ)

Աղբրի գլխին նստող տըղա,
Ձեռըդ ջըրին խըփող տըղա,
Սիրուն աչքիկ տեսնող տըղա,
Այ տղա, առ ինձի, առ ինձի։

Մեր բաղը գու գալող տըղա,
Վարդ, մանուշակ քաղող տըղա,
Դու իմ ձեռքը բռնող տըղա,
Այ տըղա, տար ինձի, տար ինձի։

## 97. ԴԵ ԳԸՆԱ, ԳԸՆԱ

(Հոկտեմբ. շրջան, Մարգարա գյուղ)

Կայնել եմ բաղում ու պարտեզում,
Սոխակը երգում, գու ծիծաղում,
Չես թողնում, որ ես հեռանամ,
Հեռանամ, քեզ մոռանամ։
Յարաբ ես քեզ ո՞նց մոռանամ, յար։
Դե գընա, գընա, լավ չես անում,
Անջիգյար, ինձ ես սպանում։

Սև-սև աչերովդ խաբեցիր,
Քաղցր լեզվովդ ինձ կապեցիր,
Ինձ թողիր խեղճ ու կիսամեռ,
Ջահել եմ ես, խեղճ ու անմեղ,
Ասա, ես քեզ ի՞նչ եմ արել, յար,
Դե, գնա, գնա...

# ՄԱՐՏՈՒ՛ՆՈՒ ՇՐՋԱ՛Ն

(1951)

## 98. ՈՎ ԱՆՆՄԱՆ, ԳԵՂԵՑԻԿ

(Վաղաշեն գյուղ)

*Ով աննման, գեղեցիկ,*
*Ինչքան սիրուն ես,*
*Ինչքան սիրուն ես,*
*Գեղատեսիլ, բոցավառ,*
*Սև աչեր ունես,*
*Ամբողջ աշխարհքիս մեջը*
*Կյանքով երջանիկ,*
*Կյանքով երջանիկ,*
*Թե որ սրտովդ սիրած*
*Լավ ընկեր ունես:*

*Չկարողացա գտնել*
*Քեզ նման ընտիր,*
*Քեզ նման ընտիր,*
*Ծնված որ ման եկա*
*Ես մի չորս երկիր:*
*Ունքերդ դալամաքաշ,*
*Այտերդ կարմիր,*
*Այտերդ կարմիր,*
*Կոկոնից բացված*
*Վարդի թերթեր ունես:*

## 99. ՀԱՅՐԵՆԻՔԻ ՋՈՒՐԸ

(Մարտունի, Վաղաշեն գյուղ)

*Վերքիս դեղ է, սպեղանի,*
*Ա՜խ, իմ հայրենիքի ջուրը,*
*Քաղցր է քանց նռան գինին,*
*Ախ, իմ հայրենիքիս ջուրը:*

*Խմողը շատ ուշ կմեռնի,*
*Քչից հարյուր տարի կապրի,*
*Ոչ մի երկիր չի գտնվի*
*Ախ, իմ հայրենիքի ջուրը:*

*Հայրենիքիս գինին է շատ,*
*Վարդագույն, կարմիր ու սպիտակ,*
*Բայց բոլորից քաղցր է, անուշ,*
*Ա՜խ, իմ հայրենիքի ջուրը:*

## 100. ՋՈՅԱՍ ՉԻ ԳԱԼԻՍ

(Վաղաշեն գյուղ)

*Մի տա մի գալիս են*
*Աշակերտները,*
*Ինչո՞ւ բոլորն եկան,*
*Ջոյաս չի գալիս:*

*Աղունիկները ալգաց*
*Թըռան գընացին,*
*Ինչո՞ւ բոլորն եկան,*
*Ջոյաս չի գալիս:*

*Անբուժելի վերքերը*
*Սրտումս մնացին,*
*Ինչո՞ւ բոլորն եկան,*
*Ջոյաս չի գալիս:*

## 101. ՆՈՒԲԱՐ

(Երանոս գյուղ)

*Սարեն ես գամ, ձորեն դու, Նուբար,*
*Ես սեր տանեմ, կարագ դու, Նուբար,*
*Հոյ Նուբար, Նուբար, Թազա Նուբար,*
*Ջան Նուբար, սիրուն Նուբար:*

*Մեկ քելե, մեկ էլ կայնի, Նուբար,*
*Տեսնողի հոգին հանի, Նուբար,*
*Հոյ Նուբար...*

*Աղջի, նստի կար արա, Նուբար,*
*Ինձի քեզի յար արա, Նուբար,*
*Հոյ Նուբար...*

*Սարի արտը արտ է, Նուբար,*
*Սիրտս քեզի կարոտ է, Նուբար,*
*Հոյ Նուբար...*

## 102. ՄԱՃԿԱԼԻ ԽՐԱՏԸ

(Երանոս գյուղ)

*Մարտ և ապրիլ եկան անցան,*
*Իմ սիրելի զավակներ.*
*Հունձի օրերն էլ մոտեցան,*
*Շուտով վարենք արտը մեր:*

*Գիտցեք, որդիք իմ հարազատ,*
*Հայերիս մեկ առած կա,*
*Այն է՝ որ ծույլ և անաշխատ*
*Մարդը քաղցած կըմընա:*

*Անմահ բնությանը աղաչենք,*
*Որ մեզ պահե անփորձանք,*
*Աշխատենք համ ուտենք, խմենք,*
*Համ չունեցողներին տանք:*

## 103. ԾԱՂԻԿ ԾԱՂԿՈՒՆՔՈՎ

(Երանոս գյուղ)

*Ծաղիկ ծաղկունքով զարդարված,*
*Կոլխոզնիկները համատարած.*
*Մեր երկրին կյանք են տալիս*
*Գերանդիով ոսկեջրած:*

## 104. ԵԿԱՆ ՁՄՌԱՆ ՑՈՒՐՏ ՕՐԵՐԸ

(Զորագյուղ)

*Եկան ձմռան ցուրտ օրերը,*
*Պակսավ խոտ ու գարմընները,*
*Խնամի ջան, գարման տուր,*
*Բարեկամ ջան, գարման տուր:*

*Դարմընի փութը մեկ մանեթ,*
*Եկեք շուտով չեկ հանեք,*
*Տարեք տավրի կեր արեք:*
*Խնամի ջան, գարման տուր,*
*Բարեկամ ջան, գարման տուր:*

## 105. ԴԸԼԵ ԼՈՄՊ ԼՈ

(Զորագյուղ)

*Ջրի հորից ջուր քաշեցի,*
*Դըլե լոմպ լո, դըլե լոմպ:*
*Աչքիս արևով քեզ աշեցի,*
*Դըլե լոմպ լո, դըլե լոմպ:*

*Հոգիս վկա, քեզ հավնեցի,*
*Դըլե լոմպ լո, դըլե լոմպ,*
*Սըրտիս մեջը սեր արեցի,*
*Դըլե լոմպ լո, դըլե լոմպ:*

*Սև աչերդ սիրի ես լե,*
*Սիրուդ գերին դառա ես լե,*
*Մորըդ փեսան դառա ես լե,*
*Դարդ ու ցավըդ տարա ես լե:*

## 106. ԱՄԱՆ, ՄԱՐԳԵՐԸՍ ՄՆԱՑ

(Զորագյուղ)

*Աղջի, հազար թառ գեյրեն, գեյրեն,*
*Թուք ես ավել քո բերնեն, բերնեն.*
*Աման, մարգերըս մընաց, մընաց,*
*Աղջի, քո յար ո՞ր ճամփով գընաց:*

*Սարից կուգաս, տուն մըտի, մըտի,*
*Մորըս գցած անըր մըտի, մըտի,*
*Աման, մարգերըս մընաց, մընաց,*
*Յարաբ յարըս ո՞ր ճամփով գընաց:*

*Մեջի միջի ցախերը, ցախերը,*
*Մենք չենք անի գախերը, գախերը,*
*Աման, մարգերըս մընաց, մընաց,*
*Յարաբ յարըս ո՞ր ճամփով գընաց:*

## 107. ՉԻԹ ԲԼՈՒԶԴ

(Զորագյուղ)

*Բարակ աղբյուր, զուլալ ջուր,*
*Չիթ, չիթ,*
*Չիթ բլուզըդ կարել եմ,*
*Մեկ դու խմիր, մեկ ինձ տուր,*
*Հոգուդ մեռնեմ,*
*Սադաֆ կոճակ շարել եմ։*

*Իմ սրտումն է սերդ հուր,*
*Չիթ, չիթ,*
*Չիթ բլուզըդ կարել եմ,*
*Մի հեռանա դու իզուր։*
*Հոգուդ մեռնեմ,*
*Սադաֆ կոճակ շարել եմ։*

## 108. ՍԱՐԻ ՃԱՄՓԵՆ ՔԱՐՈՏ Ա

(Զորագյուղ)

*Սարի ճամփեն քարոտ ա,*
*Մատներիդ մեռնեմ. ղալամ կըսազա,*
*Զինվոր յարին կարոտ ա,*
*Երբ կարոտցա, նամակ ստացա։*

*Հաղթանակիդ կըսպասեմ,*
*Սար դոշիդ մեռնեմ, օրդեն կըսազա,*
*Յար ջան, գալուդ կըսպասեմ,*
*Քեզ որ ես տեսնեմ, կարոտըս կառնեմ։*

## 109. ԳՆԱՑԵԼ ԵՍ, ԵԿԵԼ ԵՍ

*Գնացել ես, եկել ես,*
*Հա Բոլենի գյալին*
*Զինար բոյդ քոքել ես,*
*Նիրոյ Նիգյալին։*

*Հա բոլի, բոլի գյալին,*
*Նիրոյ Նիգյալին,*
*Հա բոլի, բոլի գյալին,*
*Նիրոյ նիգյալին։*

*Բաղը ես եմ, բարը դու,*
*Հա բոլենի գյալին,*
*Իմ սիրելի յարը դու,*
*Նիրոյ Նիգյալին։*
*(Կրկնակ)*

*Գնացիր եկար տեսը,*
*Հա բոլենի գյալին.*
*Տարար իմ կյանքի կեսը,*
*Նիրոյ Նիգյալին։*
*(Կրկնակ)*

## 110. ՁԵՄ ԱՌՆԻ

(Մարտունու շրջ., Զորագյուղ)

— Քե կտանք շոֆեր մարդու,
— Չէ, հայրիկ, չէ, մայրիկ, չեմ առնի,
Չեմ առնի շոֆեր մարդու,
Կըպըտըտի առանց քուն,
Ավտոն զարկի վըր պատուն,
Գիշեր, ցերեկ չի գա տուն,
Չէ, հայրիկ, չէ, մայրիկ, չեմ առնի։

— Քե կտանք թարգի մարդու,
— Չէ, հայրիկ, չէ, մայրիկ, չեմ առնի.
Տարին մե հետ չի գա տուն.
Գիշեր չունի հանգիստ քուն,
Ես մենակ կմնամ տուն,
Գիշեր, ցերեկ չի գա տուն,
Չէ, հայրիկ, չէ, մայրիկ, չեմ առնի։

—Քե կտանք նալբանդ մարդուն,
—Չէ, հայրիկ, չէ, մայրիկ, չեմ առնի,
Չեմ առնի անխիղճ մարդուն,
Մեկ փութ կառնի մեկ գլամշուն,
Ես մենակ կմնամ տուն,
Վըր աչքերիս չի գա քուն,
Չէ, հայրիկ, չէ, մայրիկ, չեմ առնի։

— Քե կտանք ջուլհակ մարդուն,
— Հա, հայրիկ, հա, մայրիկ, սրտովս է,
Ես կառնեմ ջուլհակ մարդուն.
Նա կնստի խեն կշախե,
Քե կքցա վզովս, մաքուր թալա, պարա գնա,
Հա, հայրիկ, հա, մայրիկ, սրտովս է։

## 111. ԱՂԲՅՈՒՐ, ՋՈՒՐԴ ՋՈՒԼԱԼ ՊԱՀԵ

Կարմիր կովը մըռացու,
Աղբյուր, ջուրդ զուլալ պահե.
Դեղին փարեն կխացու,
Աղբյուր, ջուրդ զուլալ պահե։

Դու իմ նանին հարսնացու,
Աղբյուր, ջուրդ զուլալ պահե.
Ես քո նանին փեսացու,
Աղբյուր, ջուրդ զուլալ պահե։

## 112. ԱՅ ԱՐԵՎԸ, ԱՐԵՎԸ

(Մարտունի, Զորագյուղ)

Եկել եմ, կերթամ գործի,
Այ արևը, արևը,
Յարաբ իմ յարը ո՞նց է,
Ո՞ւմ տամ, տանի բարևը։

Բաղ ու բախչեն ջրեցի,
Այ արևը, արևը,
Վարդերից փունջ կապեցի,
Ո՞ւմ տամ, տանի բարևը։

Ես քեզ տեսա, սիրեցի,
Այ արևը, արևը,
Սըրտիս մեջը գրեցի,
Ո՞ւմ տամ, տանի բարևը։

## 113. ՀՈՅ ԻՄ ՆԱԶԵԼԻ ՅԱՐՍ

(Զորագյուղ)

*Ջար կուգա վերի սարեն,*
*Հոյ իմ նազելի յարըս,*
*Կրծքափեր մարմար քարեն,*
*Սրտով գովական յարըս։*

*Տղա, կայնել ես քուչեն,*
*Խապար տա սրտիս մեջեն։*

*Վարդ եմ քաղել ձեր բախչեն,*
*Թողնեմ, կորչեմ քու դարդեն։*

## 114. ՄԱՏԻՆԱԳԵՍ

(Զորագյուղ)

*Կանավ, քեզի ո՞վ է շինել,*
*Կանավ, քեզի ո՞վ է շինել,*
*Հիմքըդ շատ սիրուն է քըցել,*
*Վարպետիդ պիտի գովենք,*
*Ջան, ջան, հիմքըդ շատ սիրուն է քըցել,*
*Վարպետիդ պիտի գովեմ,*
*Ջան, ջան, հիմքըդ շատ սիրուն քըցել։*

## 115. ՄԻ ՅԱՐ ՈՒՆԵՄ ԱՐՄԱՆՈՒՇ

(Մարտունու շրջկենտրոն)

*Մի յար ունեմ Արմանուշ.*
*Երգում էր քաղցր, անուշ,*
*Ինձ նա թողեց առանց հույս,*
*Իր պայմանից ելավ դուրս։*

*Յարըս ինձնից հեռացավ,*
*Իր պայմանը մոռացավ,*
*Ի՞նչ եմ անում էսպես յար,*
*Որ ինձ չեղավ դեղ ու ճար։*

*Յարես մընաց իմ սրտում,*
*Աշխարհում չունեմ խնդում,*
*Մընացել եմ վիզըս ծուռ,*
*Ընկել եմ ես դռնե-դուռ։*

## 116. ՀՆՁՎՈՐ ԱՂՋԻԿ

(Մարտունու շրջկենտրոն)

*Աղջիկ, ի՞նչ լավ քաղում ես,*
*Ձեռքիդ սուր մանգաղ ունես,*
*Մենակ քաղում ես, կապում,*
*Իսկ ինձ ընկեր չես անում:*

*Աղջի, ծարավ եմ, ջուր բեր,*
*Հետո քաղի հեկտարներ,*
*Բող ես անում ու կանչում,*
*Աչքի տակով ինձ նայում:*

*Աղջի, ի՞նչ լավ քաղվոր ես՝*
*Կոլխոզի մեջ հերոս ես,*
*Միշտ քաղում ես ու երգում,*
*Ողջ կոլխոզն է քեզ սիրում:*

*Աղջի, քեզ ընկեր կըլնեմ,*
*Դու քաղ կանես, ես կապեմ,*
*Սրտով, հոգով կաշխատենք,*
*Մենք իրար միշտ կըսիրենք:*

## 117. ԹԱՎԵՆ ԾԱԿ Ա

(Մարտունու շրջ., կոնս. գործ.)

*Թավեն ծակ ա, եղ չկա,*
*Փեսեն եկավ, տեղ չկա,*
*Փեսին շատ երես մի տա,*
*Մայրիկ ջան,*
*Փեսին ձվածեղ չկա:*

*Երևան գնալու եմ,*
*Հիմնովին մնալու եմ,*
*Հոգով, սրտով սիրել եմ,*
*Մայրիկ ջան,*
*Վերջումը տանելու եմ:*

## 118. ԿՐԱԿ ԵՍ, ԻՆՁ ԿՎԱՌԵՍ

(Լիճք գյուղ)

*Բարակ ես, բարդու ծառ ես,*
*յար ջան,*
*Կըրակ ես, ինձ կվառես,*
*յար ջան,*
*Թուխ մազերըդ, մազերըդ,*
*յար ջան,*
*Ինձի վառեց քո սերըդ,*
*յար ջան:*

Ջերիս բերանը նեղ ա,
յար ջան,
Խնձոր պահելու տեղ ա,
յար ջան,
Թուխ մազերըդ, մազերըդ,
յար ջան,
Ինձի վառեց քո սերըդ,
յար ջան։

## 119. ԳԸՆԱ, ԳԸՆԱ, ԳԱԼԻՍ ԵՄ

(Լիճք գյուղ)

Գընա, գընա, գալիս եմ,
Ղարա բիբարի քոլը,
Հետևիցը լալիս եմ,
Դարդիցըն ընկա չոլը։

Ճանապարհով գընալիս
Ղարա բիբարի քոլը,
Ես քեզ բարև տալիս եմ,
Դարդիցըդ ընկա չոլը։

## 120. ԳՅՈՒԼԱ, ԳՅՈՒԼԱ ՔԱՇՈՒՄ ԵՆ ԶԱՆԳԵՐԸ

Գյուլա, գյուլա քաշում են զանգերը,
Թափ էրա տար, ախ, մամա ջան,
Զալոյիս մազերը։

Գյուլա, գյուլա խասպարեցիները,
Զավեն թողե ախ, մամա ջան,
Իմ սիրտը չի թողե։

## 121. ԿԱՊՈՒՅՏ ԱՂԼՈՒԽՈՎ ԳՅՈՒԼԻ

Կապույտ աղլուխով գյուլի,
Լե՛յլիմ, լե՛յլիմ, լե վա՜յ լե,
Իմ յարն ինձի բլբուլի,
Թավո, թավո, թե վա՜յ լե։

## 122. ԲՐԻԳԱԴԻՐ ՅԱՐ ՈՒՆԵՄ

(Լիճք գյուղ)

Բրիգադիր յար ունեմ,
Գյուլյա,
Գնացել ա, չի գալիս,
Ո՞ւր ա,
Հոպ գյուլյա,
Գյուլին նոմերով ա,
Ճախով տանք,
Յարըս՝ քյամարով ա։
Հոգուս հանգիստ չես տալիս,
Գյուլյա,
Մենակ սիրտս է լալիս.
Ո՞ւր ա,
Հոպ գյուլյա...

## 123. ԴԵ ՔԵԼԱ, ԴԵ ՑՈԼԱ

(Լիճք գյուղ)

Իմ ֆիդանին բերեք տունը,
Դե յար, յար, յարո յաման,
Դե յար, յար, յարո յաման,
Չի տանում յարիս քունը,
Դե քելա, դե ցոլա, ֆիդան յար,
Դե քելա, դե ցոլա, ֆիդան յար։

## 124. ԿՈՒԶԵՄ ԳՆԱԼ ԻՄ ՅԱՐԻՍ ՄՈՏ

(Լիճք գյուղ)

Կուզեմ գնալ իմ յարիս մոտ,
Սոխակ եմ ես վարդի կարոտ,
Իմ յարը ամենից խորոտ,
Ինչո՞ւ բաժանվեց ինձանից։

Յարս թողեց ինձ ու գնաց,
Վիշտ ու ցավը սրտիս մնաց,
Նամակ գրի, գրած մնաց,
Ինչո՞ւ բաժանվեց ինձանից։

## 125. ԷԼԻՆՈ ՅԱՐ

(Լիճք գյուղ)

Կարմիր միզարով աղջիկ,
Էլինո յար,
Դինըդ հագարով աղջիկ,
Թելինո յար.
Գետին մի քըլե, փուշ է,
Էլինո յար,
Թուշըդ մեղրից անուշ է,
Թելինո յար։

## 126 ՄԱԶԵՐ ՈՒՆԵՍ ԾԻՐԱՆԻ

(Լիճք գյուղ)

Մազեր ունես ծիրանի,
Բամին թել-թել կտանի,
Քո լեզուն ա շաքար ու նուշ,
Ես քեզի մեռնեմ, յար անուշ։

Բոյդ կասես չինարի,
Ինքդ սիրուն, նազանի,
Քո լեզուն ա շաքար ու նուշ,
Ես քեզի մեռնեմ, յար անուշ։

## 127. ԿՐԱԿԸ ԹՌԱՎ

(Մարտունի, Լիճք գյուղ)

Կրակը թըռավ քարից,
Երի, երի, յանդըմ, Շեկո,
Ես կըմեռնեմ քո դարդից,
Յանդըմ, Շեկո ջան։

Ծով ա դառել մեր դաշտը,
Երի, երի յանդըմ, Շեկո,
Լիքը հաց ա մեր տաշտը,
Յանդըմ, Շեկո ջան։

## 128. ՋՈՒԼՈ

(Մարտունու շրջ., Զոլաքար գ.)

Մեր արտերը դուզ ա, դուզ ա,
Դափոն եկել, Զալոն կուզա.
Մերը կասի,—Զեմ տա, կուզ ա,
Քեզի մատաղ, սիրուն Զալո։

Մեր արտերը ցանինք գազար,
Դափոն գնաց մտավ բազար,
Խալաթ առավ, արժեր հազար,
Քեզի գուրբան, խորոտ Զալո։

## 129. ՄԱԳԻՆ

(Զոլաքար)

Ճրագը փաշ էր,
Մութն անուշ էր,
Վայ Մագին, վայ Մագին,
Ուշիկ գընա չաանի շուշեն,
Զիմանա էտ չար ու ճիժըն,
Վա՛յ Մագին, վա՛յ Մագին:

## 130. ԱՔԼՈՐ

(Մարտ. շրջ., Զոլաքար գյուղ)

Նոր էր ընկել մեր կալ ու կուտ,
Տարան կերան մեր աքլորին,
Աքլոր խո չէր, գոմշի ձագ էր,
Ամեն բուդը թոխլու չանք էր:

Խոմ աքլոր չէր, գոմշու ձագ էր,
Թիկունքի լենք կալի չանք էր,
Մեկ-մեկ աչքեր մեկ լուսնակ էր,
Տարան, կերան մեր աքլորին:

## 131. ՄԱՐՏԻ 8-Ը

(Զոլաքար գյուղ)

Հավաքվել են հարս, աղջիկ, կին,
Ձեր տոն շնորհավոր լինի.
Զարդարվել եք գույնզգույնով.
Ձեր տոն շնորհավոր լինի:

Մարտի ութն ա, գարուն մոտ ա,
Աշխատողին արդյունք կտա,
Լոգրի համար բոլոր տոտ ա,
Ձեր տոն շնորհավոր լինի:

Հիմա մենք ունենք տասն աղբյուր,
Տեղը գուրան, մաքուր է ջուր,
Աշխատանքը չի անցնի զուր.
Ձեր տոն շնորհավոր լինի:

## 132. ԶՈԼԱՔԱՐ

(Զոլաքար գյուղ)

Առաջ չկար ուռենի ծառ,
Այժմ ունենք մենք էլ անտառ,
Բոլորի դուռ պտղատու ծառ,
Գովելի ես, Զոլաքար:

Մեջըդ ունես երկար խաչքար,
Միջիդ աղբյուրներ են հազար,
Մեկը մեկից համեղ ու սառ,
Գովելի ես, Զոլաքար:

## 133. ԶԱՂԵՆ

(Զոլաքար)

Կարմիր էր զաղեն,
Էն երկու թաղեն,
Բռնեցին կապեցին
Էն Եփրեմ աղին,
Տարան քցեցին
Էն դատարկ մարագ.
Թաղեցին աղին
Առանց պատարագ:

## 134. ՄԱՆԳՐ-ՄՈՒՆԳՐ

(Զոլաքար գյուղ)

Մանգր-մունգր, մանգր-մունգր,
Նշնելու տարեկան է,
Սիրել եմ ու պիտի տանեմ,
Ջահնամ թե բարեկամ է:

Եկել, սերս կապել է
Էդ քու ջիվան ջանից,
Մանգր-մունգր, մանգր-մունգր,
Սիրել եմ ու պիտի տանեմ,
Ջահնամ թե բարեկամ է:

## 135. ՋԱՆ, ԹԻՄՈՒՐ ՏՂԱ.

(Զոլաքար գյուղ)

Ջան, Թիմուր տղա, ջան,
Ջան, Թիմուր տղա,
Յոթ տարի կերցրի
Բաղդըատ խուրմա,
Վազոն ու եկել,
Ախ, տասներկու ակնեն,
Շատ ելնենք ու նստենք,
Եթանք մեր ճամփեն:
Ջան, Թիմուր տղա, ջան...
Ջան, Թիմուր տղա.
Յոթը տարի կերցրի
Բաղդըատ խուրմա:

## 136. ՀԱՅԿԱՆՈՒՇ

(Մարտունու շրջ., Զոլաքար գ.)

Ուշիկ քելա, մի խաղա, Հայկանուշ,
Մատիտ մատնիք կերեա, Հայկանուշ,
Ահա եկան օրերըդ, Հայկանուշ,
Կտրեմ կարեմ շորերըդ, Հայկանուշ:
Ալ յուղ բալկոն,
Յուղ բալկոնա,
Սոլլանա, սոլլանա,
Զուխտըմ օրիորդ մարալ ու ջեյլան ա,
Ջեյրան ա:

Կամարաձև ունքերըդ, Հայկանուշ,
Էդ քո սև-սև աչքերըդ, Հայկանուշ,
Ինձի վառեց ու այրեց, Հայկանուշ,
Էդ քո ալած համբույրըդ, Հայկանուշ:

## 137. ՏԱՐԱՆ ԿԵՐԱՆ ՄԵՐ ՍԵՎ ՀԱՎԸ

(Զոլաքար գյուղ)

*Աշխատանքից եկա տուն*
*Կանչի, սևիկ հավըս չկար,*
*Հանկարծ տեսա մի տան բակում*
*Հավիս գլուխ անուշ անում,*
*Տարան կերան մեր սև հավը,*
*Ուստի ջանին կպնի ցավը:*

*Հավիս գցել էին ղազան,*
*Վրեն թափել յոթ-ութ գաղան,*
*Կնիկ, կանչի վկաներին,*
*Որ պատժենք էս գողերին,*
*Տարան կերան մեր սև հավը,*
*Ուստի ջանին կպնի ցավը:*

*Մեր սև հավը գոմշի ձագ էր,*
*Որ երգում էր, մի սոխակ էր,*
*Որ թռչում էր, մի թառլան էր,*
*Որ վազում էր, մի մարալ էր,*
*Տարան կերան մեր սև հավը,*
*Ուստի ջանին կպնի ցավը:*

## 138. ԿԱՔԱՎԸ ԹՌԱՎ

(Վարդենիկ գյուղ)

*Լամպեն լասեք, թող վառի,*
*Կաքավը թռավ, արտերս մնաց հնձելու.*
*Ամենքն իր սիրածն առնի,*
*Բանս էլ որ քաշեց,*
*Սոնաս էլ մնաց գրկելու:*

*Լուսնակ բոլոր մեջ բակին,*
*Կաքավը թռավ, արտերս մնաց հերկելու.*
*Ծաղքըն ընկավ գընդիս ակին,*
*Բանս էլ որ քաշեց,*
*Սոնաս էլ մնաց գրկելու:*

## 139. ՍԻՆԱՄ ՍԱՐԸ

(Մարտունու շրջ., Վարդենիկ գ.)

*Սինամ սարը խորոտ ա,*
*Սարի տակը արոտ ա,*
*Սոնան յարին կարոտ ա,*
*Յար սինամե, սինամե:*

*Սինամ սարի ծաղկանքը,*
*Սոնայի աչք ու ունքը,*
*Վզից կախած ուլունքը,*
*Յար սինամե, սինամե:*

## 140. ԿԱՆԱՉ-ԿԱՐՄԻՐ Է ՕՐՍ

(Վարդենիկ գյուղ)

Ես քաղվոր եմ, արտ անեմ,
Կանաչ-կարմիր է օրըս,
Կոլխոզում եմ, դարդ չանեմ,
Կանաչ-կարմիր է օրըս,
Կոլխոզում եմ, դարդ չանեմ,
Կանաչ-կարմիր է օրըս:

Մաճիս անգին քար անեմ,
Կանաչ-կարմիր է օրըս,
Տրակտորիստ յար անեմ,
Կանաչ-կարմիր է օրըս:

Արտը ծըլի, հասնի տա,
Կանաչ-կարմիր է օրըս,
Յարըս գա, ինձի սեր տա,
Կանաչ-կարմիր է օրըս:

## 141. ՔԵԼԵ ՍԱԹՈ

(Վարդենիկ գյուղ)

Քելե, Սաթո, քելե,
Նազ է քու քելքը,
Շատ սիրուն ես, յարս ջան,
Տարար իմ խելքը:

Մազերըդ հյուսել,
Ուսիդ ես արել,
Ջահել տղերքանցը, յարս ջան,
Եսիր ես արել:

Սաթոն էկավ կայնավ
Մեր կալի դուշը,
Մեղրել եմ կարագը,
Փաթթել եմ լուշը:

Սաթոն էկավ կայնավ
Մեր կալի իզը,
Թելըս կանթեմ, գըցեմ
Սաթոյի վիզը:

## 142. ԱՐԵՎԱՄՈՒՏ Է, ՏՈՒՆ ԱՐԻ

(Վարդենիկ գյուղ)

Արևմուտ է, տուն արի,
Չարանի գլուխ, չարանի գլուխ,
Ով սիրուն յար, շատ արի,
Ելել եմ սարը, ման կուգամ,
Իջնեմ ձորը, յան կուգամ,
Ելնեմ սարը, ման կուգամ,
Իջնեմ ձորը, յան կուգամ:
Չարանի գլուխ, չարանի գլուխ,
Ով սիրուն յար, տուն արի:

## 143. ԷՍ ՀԱՐՍԱՆԻՔԸ Ո՞ՒՄՆ Ա

(Վարդենիկ գյուղ)

Էս հարսանիքը ո՞ւմն ա,
Հարսնիքին մատաղ լինեմ,
Հարսնիքին հարսն ա պարում,
Բոյին ղուրբան լինեմ։

Էս ավտոն մեջը լիներ,
Աչքերը կարմիր լիներ,
Գնայի իմ յարիս մոտ,
Կարճ գիշեր երկար լիներ։

## 144. ԾԽԱԽՈՏԻ ԱՂՋԻԿՆԵՐԸ

(Ղարանլուղ գյուղ)

Պիտի գովեմ սրտի խորքից
Ծխախոտի աղջիկները,
Ծաղիկներն են մաքուր, անբիծ
Ծխախոտի աղջիկները։

Կոլխոզական մեր դաշտերում
Ծխախոտի աղջիկները,
Ձեռք են բերել բարձր անուն
Ծխախոտի աղջիկները։

## 145. ՓՇԱՏԻ ԾԱՌԸ ԲԱՑՎԵԼ Է

(Ղարանլուղ գյուղ)

Փշատի ծառը բացվել է վարդի պես,
Հարվածային քաղհան կանեմ, արի տես,
Սըրտով սիրածըս դու ես,
Փըշատի ծառը բացվել է վարդի պես,
Գնացել ես, էդ ո՞ւր ես,
Փըշատի ծառը բացվել է վարդի պես։

## 146. ԳՅՈԶԱԼ ՅԱՐ ՋԱՆ

(Ղարանլուղ գյուղ)

Գյոզալ յար ջան,
գյոզալ յար,
Չկա քեզ պես սիրուն յար,
Իմ մինուճար անուշ յար,
Գյոզալ յար ջան,
գյոզալ յար։

Գյոզալ յար ջան,
գյոզալ յար,
Գնացել ես, եկել ես,
Երկար բոլըդ կոկել ես,
Գյոզալ յար ջան,
գյոզալ յար։

## 147. ՇՈՒՇԱՆ ՋԱՆ

(Նոր Բայազետ)

*Կոլխոզական արտերի*
*Բերքն է առատ, Շուշան ջան.*
*Սովետական մեր գարի*
*Կյանքն է զվարթ, Շուշան ջան։*

*Հանդը տրակտորն է վարում,*
*Կոմբայնը դադար չի առնում,*
*Առատ բերքի դովք ենք անում,*
*Կոլխոզի զարդ, Շուշան ջան։*

*Կրկնակ։*

*Հայրենիքի անկեղծ սերը*
*Միշտ վառ պահենք, Շուշան ջան,*
*Մենք ենք մեր վաստակի տերը*
*Մեր երկրում, Շուշան ջան։*

*Կրկնակ։*

*Գովական է մեր նոր կյանքը,*
*Կոլխոզն է մեր պարծանքը,*
*Հավերժ է մեր աշխատանքը,*
*Կոլխոզի զարդ, Շուշան ջան։*

*Կրկնակ։*

## 148. ԹԱՆԿԱԳԻՆ ՀՅՈՒՐԵՐ

(Նոր Բայազետ)

*Բարով, հազար բարի,*
*Թանկագին հյուրեր,*
*Լեյլի, լեյլի, լեյլի, լեյլի,*
*Ձեր թանկագին գալը*
*Մեզ համար լավ է,*
*Ես ձեզի ղուրբան,*
*Ձեր գալուն ղուրբան,*
*Սարերի լալեք,*
*Այրեն ձեր բալեք։*

## 149. ՀԱՅԻ ԱՂՋԻԿ, ԻՄ ԱՂԱՎՆՅԱԿ

(Նոր Բայազետ, տրիկոտաժի ֆաբրիկա)

*Դու նման ես ջեյրան բալե,*
*Պոռշներդ բարակ մազ է,*
*Ինչ որ հագնես, քեզ կըսազե,*
*Հայի աղջիկ, իմ աղավնյակ։*

*Հերոս աղջիկ, հայի աղջիկ,*
*Սև աչքերով մարալ աղջիկ,*
*Սրտիս մեջը կրակ ցցիր,*
*Հայի աղջիկ, իմ աղավնյակ։*

## 150. ԲԵՐ ՁԵՌՔԴ ՀԱՄԲՈՒՐԵՄ, ՄԱՅՐԻԿ

(Բայազետ, տրիկոտաժի ֆաբրիկա)

*Բեր ձեռքըդ համբուրեմ, մայրիկ,*
*Կերել եմ կաթդ անուշիկ,*
*Ով իմ բարեսիրտ մայրիկ ջան,*
*Մընաս բարով, ես գնում եմ,*
*Էլի ամեն հոգսից ազատ,*
*Տանըդ մեջ հանգիստ նստած,*
*Ով իմ աննման մայրիկ ջան,*
*Մընաս բարով, ես գնում եմ:*

# ԷՋՄԻԱԾՆԻ ՇՐՋԱՆ

(1951 թ.)

## 151. ԱՂՋԻԿՆԵՐ, ԵԼԵՔ ԵՐԹԱՆՔ

(էջմիածին)

*Աղջիկներ, ելեք երթանք*
*չանաքի, չանաքի,*
*Օղակով ելեք երթանք*
*հանաքի, հանաքի,*
*Բամբակը քուլա-քուլա,*
*Յար, նայ, նայ,*
*յար, նայ, նայ,*
*Աշխօրը առատ, առատ,*
*Ջան նայ, նայ,*
*ջան նայ, նայ,*
*Յար, նայ, նայ,*
*նայ, նայ. նայ,*
*Ջան նայ, նայ,*
*նայ, նայ, նայ։*

## 152. ՏԱՐԻՆ ԱՌԱՏ ՏԱՐԻ Է

(էջմիածին)

*Տարին առատ տարի է,*
*Այգի, բամբակ, բարի է,*
*Բելլի յա, Թելլի յա,*
*Տեսնում ենք որ շատ լի յա,*
*Սոցմրցման ենք մենք մտել,*
*Գլոզալ բամբակ հավաքել:*

*Բելլի յա, Թելլի յա,*
*Տեսնում ենք, որ շատ լի յա,*
*Բա որ գուլթան ես անում,*
*Գետնից կըրակ ես հանում:*

*Բելլի յա, Թելլի յա և այլն:*
*Բա որ բամբակ չանաքում,*
*Ջուխտ բաղաններ շալակում,*
*Բելլի յա և այլն:*

## 153. ՅԱՐ, ԲԱՂՈՎՆ ԱՐԻ

(էջմիածին)

*Ծաղկաձորում ծաղիկ եղած*
*Քամին եկավ, յարս չեկավ,*
*յար.*
*Ես կուզեմ, նանըս չի տա,*
*Յար, բաղովն արի,*
*Զիմանովն արի,*
*Թեկուզ իմանա,*
*Էլ չեմ գլիմանա,*
*Արի կանգնի նանիս մոտը,*
*Ա՛յ տղա,*
*Սիրուն հագած սև քլաքուլով,*
*Ջան տղա,*
*Ես սիրում եմ քո աղջկան*
*Ծըժի պես,*
*Թե որ չտաս, կփախցնեմ*
*Կժի պես:*

## 154. ՍԱՐԵՐ, ՀԵՏ ԳՆԱՑԵՔ

(էջմիածին)

*Ծիրան եմ ծառի ծերին,*
*Ելնենք սարը, բռնենք բոլորի պարը.*
*Խառնըվա սերևներին,*
*Սարեր, հետ գնացեք, տեսնեմ իմ յարին:*

## 155. ՋԱՆԻԿ ՆԱՆԱՐԸՄ

(Էջմիածին)

Շերեփը եղի միջին,
Ջանիկ նանարըմ, նանարըմ,
Սիրածըս գեղի միջին,
Հանիկ նանարըմ, նանարըմ։

Երևան ձորի միջին,
Ջանիկ նանարըմ, նանարըմ,
Սառն աղբյուր քարի միջին,
Ջանիկ նանարըմ, նանարըմ։

## 156. Է՛Ն Ի՞ՆՉ ԴՈՒՇ Ա

(Էջմիածին)

Է՛ն ի՞նչ դուշ ա էն քարին,
Առնեմ էլ մեկ ա,
Զառնեմ էլ մեկ ա,
Աչքըս լըցվել ա արին,
Իմ սիրած տըղի
Մազերը չեկ ա։

Վեր կացա հավախոսին,
Առնեմ էլ մեկ ա,
Զառնեմ էլ մեկ ա,
Գութանն ա վարում փոսին,
Իմ սիրած տըղի
Մազերը չեկ ա։

## 157. ԳԻԼՄԸ ԳԻԼԱՍԻ ԾԱՌԸ

(Էջմիածին)

Մատանուս կապույտ ակը,
Անտեր մնար գիլմի գիլասի ծառը,
Յոլաց ընկավ ձեր բակը,
Ես սիրեցի, խալխը տարավ իմ յարը։

## 158. ԲԻԼԲՈՒԼ ԵՄ, ԲԻԼԱԲԱՆԴ ԵՄ

(Էջմիածին)

Բիլբուլ եմ, բիլաբանդ եմ,
լո, վա՛յ լո.
Ծիրան եմ, քամու բանդ եմ,
լո, վա՛յ լո.
Լո, վա՛յ լո, լո, վա՛յ լո,
վա՛յ լո, Ջեյնարը,
Յարիս գրկեմ
ու տանեմ մեր բակը։

## 159. ԱՂՋԻ, Ի՞ՆՉ Է ԻՄ ՄԵՂԸ

(էջմիածին)

Աղջի, ի՞նչ է իմ մեղը,
Յարըս, յարըս, յարըս, յարըս,
Հալիր չիգյարիս եղը,
              յարըս, յարըս,
Աման, էրվա կրակին,
Սաներակին, քավորակին,
Քավոր, թույլ տուր հասնեմ
Իմ նպատակին:

## 160. ԷՆ ՍԱՐԻՆ

(էջմիածին)

Մազերս խըսեր կանեմ,
Էն սարին, էն սարին,
Իմ սիրած յարին.
Տղերքանց եսիր կանեմ,
Եկել են որ խաբեն
Իմ սիրած յարին:

## 161. ԲԱՂԻ ԲԱԴԱՄԸ ՆՈՒՇ Ա

(էջմիածին)

Բաղի բադամը նուշ ա,
Սիրածն ի՞նչ ա, աղջի,
Որ էգքան անուշ ա,
Վառվա, գյուլա յարըս,
Վառվա, գյուլա յարըս։

Յար ջան, տուն արի, ուշ ա,
              Սիրածն ի՞նչ ա, աղջի,
Ճամփեքը փոս ու փուշ ա:
              Վառվա, գյուլա յարըս,
              Վառվա, գյուլա յարըս:

## 162. ԳՆԱՑԻՐ, ԵԿԱՐ ԴԵՍԸ

(էջմիածին)

Գնացիր, եկար դեսը,
              Աղջիկների գեյրեն շալ է,
              Տղաներին սև սատին,
Տարար իմ կյանքի կեսը,
              Իմ յարինը մարկիզետ է,      (2 անգամ)
              Գյուլ վարդերով թանկագին:
(Հերիք) չեմ ուզում անես,
Չես գըտնի դու ինձի պես:

## 163. ԱՐԻ, ՅԱՐ ՋԱՆ

(էջմիածին)

*Ես քեզի ինչ եմ արել,*
*Արի, յար ջան,*
*Արի, տանեմ,*
*Էրել ես, վառել ինձի,*
*Ջան յարո ջան,*
*Յավըդ տանեմ։*

*Ես քեզի ինչ եմ արել,*
*Արի, յար ջան,*
*Արի տանեմ,*
*Ինձ թողել հեռացել ես,*
*Ջան յարո ջան,*
*Յավըդ տանեմ։*

## 164. ԱՂՋԻԿ ՏԵՍԱ ՄԵՐ ԳԵՂԸ

(էջմիածին)

*Աղջիկ տեսա մեր գեղը,*
*Նինարե,*
*Բացեց իմ սրտի սերը,*
*Նինարե,*
*Նինեմ, նինեմ, նինարե,*
*Հոյ աման,*
*Շատ սիրուն է, խոնարհ է,*
*Թոյ աման։*
*Աղջիկ տեսա մեր այգին,*
*Ալ խաս ուներ իր հագին։*
*Աղջիկ տեսա նազերով,*
*Փարվազ կաներ մազերով։*

## 165. ՈՒԼՈՒԶ-ԲՈՒԼՈՒԶՈՎ ՏՂԱ

(էջմիածին)

*Թըռի, թըռի, շուտ գնա,*
*Ուլուզ-բուլուզով տըղա,*
*Ոչ մեկից հետ մի մընա,*
*Կարմիր բըլուզով տըղա։*

*Զարդիր մեր չար թշնամուն,*
*Հասնես մուրազիդ, տըղա,*
*Հետ մի կաց, առաջ գընա,*
*Քեզ մատաղ, հերոս տըղա։*

## 166. ԿԱՆԱՉ-ԿԱՐՄԻՐ ՏԵՐԵՎԸ

(էջմիածին)

*Բախչեն լիքը վարդեր ա.*
*Կանաչ-կարմիր տերևը,*
*Տերևը, տերևը,*
*Կանաչ-կարմիր զարդեր ա,*
*Պաչեմ ունքերիդ վերևը,*
*Վերևը, վերևը։*

*Մերըս կերավ մառ սոխ,*
*Կանաչ-կարմիր տերևը.*
*Տերևը, տերևը,*
*Ինձի բերեց երգ ասող,*
*Պաչեմ ունքերիդ վերևը,*
*Վերևը, վերևը։*

*Ձեռիս բանի երկու նուռ,*
*Եկա կանգնեցի ձեր դուռ։*

## 167. ԵԿԵԼ ԵՄ ՅԱՐԻՍ ՔՈՎԸ

(էջմիածին)

*Հայդանա բերդի հովը,*
*Էլլի յար,*
*Եկել եմ յարիս քովը,*
*Թելլի յար,*
*Հայդանա բերդի բոլորը,*
*Էլլի յար,*
*Շախըս մի կտրի, խաղա,*
*Թելլի յար։*
*Հայդանա բերդի պատը,*
*Չկա իմ յարիս հատը։*

## 168. ԳԱՅԼՆ ՈՒ ՈՉԽԱՐԸ

*Գայլը ոչխարին ասաց,*
*Քո տիրոջ շունը, քո տիրոջ շունը,*
*Չի թողնում մեկ օր,*
*Որ գամ ձեր գուղը,*
*Քեզ ղոնախ անեմ,*
*Տանեմ մեր տունը,*
*Տես ինչ գեղեցիկ,*
*Ընտանիք ունեմ։*

## 169. ՍԱՐՔԻ ՍԱՄՈՎԱՐ

(էջմիածին)

*Պարտեզումը ման եկար,*
*Սարքի սամովար,*
*Դու իմ սրտին դուր եկար,*
*Ոչ ոսկի կուզեմ, յարո ջան,*
*Ոչ արծաթ քյամար։*

*Դու իմ սրտի սեր տըղա,*
*Իրիկուն ուշ տուն եկար։*

## 170. ԱՂՋԻ ՋԱՆ

(էջմիածին)

*Էս ինչ լավ էր բամբակը,*
*Աղջի ջան, ես քեզ առնելու*
*Նպատակ ունեմ,*
*Հով էր կանաչի տակը.*
*Բանակ եմ գնում այս տարի,*
*Ժամանակ չունեմ։*

*Մատանու կապույտ ակը,*
*Աղջի ջան, ես քեզ առնելու*
*Նըպատակ ունեմ.*
*Թռավ ընկավ մեր բակը։*
*Բանակ եմ գնում այս տարի,*
*Ժամանակ չունեմ։*

## 171. ՆՈՐ ԵՄ ՍԻՐԵԼ, ԼԱՎՆ Ա

(էջմիածին)

Սիրել եմ, յանա, յանա,
Սալի վրի նալն ա,
Բիր ջան, մերըս չիմանա,
Նոր եմ սիրել, լավն ա։

Սիրել եմ հազար տարով,
Սալի վըրի նալն ա,
Որ չտանի, կընկնեմ քարով,
Իմ սիրածը լավն ա։

## 172. ԵՍ Ի՞ՆՉ ԵՄ ԱՐԵԼ ՔԵԶԻ

(էջմիածին)

Ես ինչ եմ արել քեզի,
Ա՜յ խալլու, խալլու յարըս,
Երել ես, վառել ինձի,
Խալլու, նըշանլու յարըս։

Չեմ ուզում, որ ինձ տանես,
Ա՜յ խալլու, խալլու յարըս,
Աս ու խոսելըդ՝ ինչ ի,
Խալլու, նշանլու յարըս։

## 173. ԴՈՒԶՔՅԱՆԴԻՍ

(էջմիածնի շրջան)

Ջոլի օրդակ, ջրի բադ,
Դուզքյանդը, Դուզքյանդը
Դուրան ա,
Յարըս տանս չընի վառ,
Ով մոռանա, թող քոռանա,
Քո տված խոստումը,
Նշանը, պայմանը։

## 174. ԳՆԱՑԻՐ, ԵԿԱՐ ԴԵՍԸ

(էջմիածին)

Գընացիր, եկար դեսը,
Վայ լուր, վայ լուր, վայ լուր,
Տարար իմ կյանքի կեսը,
Վայ լուր, ջանըմ ջալլուր։

Եկար, գնացիր դենը,
Վայ լուր, վայ լուր, վայ լուր,
Հանեցիր սրտից քենը,
Վայ լուր, ջանըմ ջալլուր։

## 175. ՉԵՄ ՈՒԶՈՒՄ ԵՍ ԷՆ ՏՂԻՆ

(էջմիածին)

*Չեմ ուզում ես էն տղին,*
*Վայ, մամայի բալա,*
*Սիրելի չի մեր գեղին,*
*Լավ արեցի, չառա։*
*Գնամ կանգնեմ մեր բաղին,*
*Վայ, մամայի բալա,*
*Ձեռով կանեմ էն տղին,*
*Ինձ համար մի-մի սար ա։*

## 176. ՄԱՐԱԼՈՅ ԱՂՋԻԿ

(էջմիածին)

*Արազն անցա էն կուռը,*
*Մարալոյ աղջիկ,*
*Սերըդ ինձի վառել ա,*
*Եկա կայնի ձեր դուռը,*
*Մարալոյ աղջիկ,*
*Ուշք ու միտքս տարել ա։*
*Արի, դու ինձ մի խոսք տուր,*
*Մարալոյ աղջիկ,*
*Սերըդ ինձի վառել ա,*
*Թե չէ ես կընկնեմ Քուռը,*
*Մարալոյ աղջիկ,*
*Ուշք ու միտքս տարել ա։*

## 177. ՕՂԱԿԱՎԱՐ ՅԱՐՍ

(էջմիածին)

*Օղակավար յարիս տեսեք,*
*Հոյ, հոյ Նազան, Նազան, Նազան,*
*Նրա գործի բարին տեսեք,*
*Պենջակ յարին լավ է սազում։*
*Յարիս արած գործին տեսեք,*
*Հոյ, հոյ Նազան, Նազան, Նազան,*
*Նրա բոյ ու բուսին տեսեք,*
*Բյամար յարին լավ է սազում։*

## 178. ԱԽ ԱՄԱՆ, ՅԱՐ ՋԱՆ

(էջմիածնի շրջկենտրոն)

*Վարդերը արևին,*
*Վարդերը արևին,*
*Սպասում եմ, յար ջան,*
*Ղըրկածըդ բարևին։*

*Ախ աման, յար ջան,*
*Ոտից գլուխ մարջան,*
*Չըլնես ինձ դավաճան։*

*Մեր օթախը լեն ա,*
*Մեր օթախը լեն ա,*
*Շիվլոտ դեյրես հագնեմ,*
*Թող գա յարըս տենա։*
*(կրկնակ)*

*Մեր օթախի հաշտը,*
*Մեր օթախի հաշտը,*
*Էսօր յարըս գնաց*
*Պատերազմի դաշտը։*
*(կրկնակ)*

*Մարգերի օլորը,*
*Մարգերի օլորը,*
*Յարըս ման էր գալի*
*Բեռլինի բոլորը,*
*(կրկնակ)*

## 179. ԲԱՐԵՎ, ՕՐԻՈՐԴ

(էջմիածին)

*Նազլու աղջիկ, նազ աղջիկ,*
*Բարև, օրիորդ, բարև, օրիորդ.*
*Բարի լույս.*
*Վարդ, շուշան ես դու ինձ համար*
*Ջան աղջիկ,*

*Մտա ձեր տուն,*
*Մերըդ խորթ էր,*
*Մութ կախեց,*
*Ելա դուրս։*

*Սիրուն աղջիկ, ջան աղջիկ,*
*Բարև, օրիորդ, բարև, օրիորդ,*
*Բարի լույս,*
*Անգին քար ես դու ինձ համար,*
*Ա՛յ աղջիկ,*
*Մտա ձեր տուն...*

*Անգին մարգարիտ է երեսիդ խալը,*
*Արժանի է քեզի գովասանք տալը։*

## 180. ԼԱՏՈՒՐ

(էջմիածին)

Սարերը սընձոտել ա,
Լատուր,
Վարդ ու մեխակ բացվել ա,
Լատուր,
Լատուր, լատուր,
Բլաքլուլըդ յան տուր,
Նստացրու փայտոնըդ,
Ման տուր։

Էս գարնան անուշ օրին,
Լատուր,
Գնանք ման գանք էն սարին,
Լատուր,
Լատուր, լատուր,
Բլաքլուլըդ յան տուր,
Նստացրու փայտոնը,
Ման տուր։

## 181. ԱՄԱՆ ՄԵՐԱ

(էջմիածին)

Խնձոր ունեմ կծած ա, մերա,
Սիրած յարի ղըրկած ա, մերա,
Աման, մերա, մարգերըս մնաց,
Յարար յարըս ո՞ր ճամփով գնաց։

Իմ յարը մաշինիստ ա, մերա,
Գործի մեջը շատ խիստ ա, մերա,
Աման, մերա, մարգերըս մնաց,
Յարար յարս ո՞ր ճամփով գնաց։

## 182. ՆԻՆԱՐ, ԲՈՅԴ ՉԻՆԱՐ Է

(էջմիածնի շրջկենտրոն)

Բոյ ջան, ձենըդ անուշ ա,
Հո՜յ,
Նինար եմ, հոյ նինար եմ,
Լեզուդ շաքար ու նուշ ա,
Հո՜յ,
Նինար, բոյըդ չինար է։

Ծիրան եմ ծառի ծերին,
Հոյ,
Նինար եմ, հոյ նինար եմ,
Խառնվա տերևներին։
Հո՜յ,
Նինար, բոյըդ չինար է։

Եկան քաղեցին տարան,
Հո՜յ,
Նինար եմ, հոյ նինար եմ,
Տվեցին անգետներին։
Նինար, բոյըդ չինար է։

Թամար եմ կապել ոսկի,
Հո՜յ,
Նինար եմ, հո՜յ նինար եմ,
Կանչում եմ, արի խոսքի։
Նինար, բոյըդ չինար է։

## 183. ԽՍՈՐ ԼԱՎ ԷՐ, ՔԱՆՑ ԵՐԵԿ

(Էջմիածին)

Խսօր լավ էր, քանց երեկ,
Կաքավը թռավ,
Արտերս մնա հնձելու,

Արտերս մնա հնձելու:
Բաղհան եմ արել, շատ ա,
Կաքավը թռավ,
Արտերս մնա հնձելու,

Վառվում եմ գիշեր-ցերեկ,
Վախենամ քնեմ,
Բնավը ընկնեմ,

Սիրածըս Այգեշատ ա,
Վախենամ քընեմ,
Բնավը ընկնեմ,
Արտերս մնա հնձելու:

## 184. ԱՂՋԻԿ ՍԻՐՈՒՆ

(Էջմիածին)

Աղջիկ սիրուն,
Նոր ա բացվել արևը,
Քեզ եմ ղրկում
Իմ կարոտած բարևը:

Աղջիկ սիրուն,
Տարար աչքերիս քունը,
Արի ասա,
Ո՞ր մահլեն ա ձեր տունը:

Շատ բամբակ եմ ցանել
Կոլխոզի արտը,
Անուշ աղջիկ,
Դու ես իմ կյանքի զարդը:

Աղջիկ սիրուն,
Սպիտակ դոշըդ մի՛ բանա,
Յարալու եմ,
Էս ցավին չեմ դիմանա:

## 185. ՆԱՆԱՆ ՅԱՐ

(Էջմիածին)

Բաղհան եմ անում մառ սարին,
Մատաղ ըլնեմ ես իմ յարին,
Մեջքին արծաթե քամար ա,
Մեռնեմ ունքի կամարին:

Նանան յար, հեյ, նանան յար,
Էս ի՞նչ սիրուն, ջան, նանան յար,

Մաշինով ես բամբակ ցանեմ,
Թաքուչակով քաղհան անեմ,
Տեսնեմ թե բերքարել ես,
Գոգնոցըս չարդախ կանեմ:

Նանան յար, հեյ, նանան յար,
Էս ի՞նչ սիրուն, ջան, նանան յար:

## 186. ԱՆՈՒՇ ՅԱՐՈ ՋԱՆ

(էջմիածին, 1921 թ.)

*Ո՞վ է տեսել էսպես լավ բան,*
*Անուշ յարո ջան,*
*Հայաստանը Խորհրդային,*
*Անուշ յարո ջան,*

*Վերջը տըրվեց չար դաշնակին,*
*Անուշ յարո ջան,*
*Արև ծագեց Հայաստանին,*
*Անուշ յարո ջան։*

## 187. ԿՈԼԽՈԶԱԿԱՆ

(էջմիածին)

*Կոլխոզումը արտ ունեմ,*
*յար, յար,*
*Արտով սիրած յար ունեմ,*
*յար, յար,*
*Էլ իմ դարդ ու ցավն ինչ ա,*
*ջան, ջան,*
*Որ քեզի պես յար ունեմ,*
*ջան, ջան։*

*Ինչքու ընկնեմ սար ու չոլ,*
*յար, յար,*
*Կփորփրեմ բամբկի քոլ,*
*յար, յար,*
*Էլ իմ դարդ ու ցավն ինչ ա.*
*յար, յար,*
*Աշխօր ունեմ՝ բոլ է բոլ,*
*ջան, ջան։*

## 188. ԱՂՋԻ, Ո՞Վ Ա ՔՈՒ ՄԱՐԴԸ

(էջմիածին)

*Մազիդ անկել ես վարդը,*
*Աղջի, ո՞վ ա քու մարդը.—*
*Կոմունիստ ա,*
*Հո իմացա,*
*Գործով ճիշտ ա,*
*Մի քիչ խիստ ա,*
*Ջան, ջան։*

*Դոշիդ շարել ես զարդը,*
*Սարեթ, ո՞վ ա քո մարդը.—*
*Կոլխոզնիկ ա,*
*Հո իմացա,*
*Շատ ճարպիկ ա,*
*Գործ անող ա,*
*Ջան, ջան։*

*Դե, դու սաս, ջան Մարթա,*
*Սաս, ո՞վ ա քու մարդը.—*
*Կոմսոմոլ ա,*
*Հո իմացա, գործ սիրող ա,*
*Շատ ազնիվ ա,*
*Ջան, ջան։*

*Հերիք անեք հանաքը,*
*Դե շուտ սրծեք չանաքը,*
*Ջան աղջիկներ,*
*Ոնց որ ջեյրան,*
*Գործ շատ արեք՝*
*Ես ձեզ հեյրան,*
*Ջան, ջան։*

## 189. ԱՅ ՍԱՐ ՈՒ ՍԵՅՐԱՆ

(Էջմիածին)

Բաղհան անելու ես գնում,
Այ սար ու սեյրան, յար,
Ինձ հալ ու մաշ ես անում,
Մարալ ու ջեյրան, յար:

Մեր տան առաջով անցնելիս,
Այ սար ու սեյրան, յար,
Մի անուշ խոսք չես տալիս,
Մարալ ու ջեյրան, յար:

## 190. ՍԵՐՆ ԱՆՈՒՇ Է

(Էջմիածնի շրջան)

Սովետական մեր աշխարհի
Սերն անուշ է, յար,
Սերն անուշ է, յար,
Մեր սարի աղբյուրների
Ջուրն անուշ է, յար,
Ջուրն անուշ է, յար:

Այս երջանիկ մեր օրերի
Սերն անուշ է, յար,
Սերն անուշ է, յար,
Կոլխոզական մեր դաշտերի
Բերքն առատ է, յար,
Բերքն առատ է, յար:

Կոլխոզ սանդղողին մեռնեմ,
Սերն անուշ է, յար,
Սերն անուշ է, յար,
Հայրենիքիս փառքին մեռնեմ,
Կյանքն անուշ է, յար,
Կյանքն անուշ է, յար:

## 191. ՋԱՆ, ԿՈՄՍՈՄՈԼ Է ՅԱՐԸՍ

(Էջմիածին)

Հանդերին իջավ աշուն,
Ջան, կոմսոմոլ է յարըս,
Կոլխոզի բերքն ենք բաշխում,
Ջան ու ջիգյար իմ յարըս:

Կոմբայնով հունձ ենք արել,
Ջան, կոմսոմոլ է յարըս,
Ցորենը տուն ենք արել,
Ջան ու ջիգյար իմ յարըս:

Աշուն եկավ, հով եկավ,
Ջան, կոմսոմոլ է յարըս,
Բերքը ալեց՝ ծով էլավ,
Ջան ու ջիգյար իմ յարըս:

# ԱՐՏԱՇԱՏԻ ՇՐՋԱՆ

(1952 թ.)

## 192. ԲԱՂԱՔԱՂ

(Արտաշատ)

*Քաղենք խաղողը,*
*Լըցնենք կողովը,*
*Դե, քաղենք սեր,*
*Փըռենք արևը.*

*Ծաթ-ճութ,*
*Ծաթ-ճութ,*

*Դե, քաղենք կախեթ,*
*Ազատվի չախեդ.*
*Քաղենք մսխալին,*
*Զըմրնա կալին.*

*Ծաթ-ճութ,*
*Ծաթ-ճութ,*

*Դե, քաղենք լալվարին,*
*Էս տարվա բարին,*
*Դե, քաղենք ռազգին,*
*Աղեկ կըտան գին.*

*Շուտ-շուտ,*
*Շուտ-շուտ,*

*Քաղենք քիշմիշին,*
*Տանք մեր Անուշին.*
*Քաղենք արենին,*
*Շուտ դցենք գինին.*

*Շուտ-շուտ,*
*Շուտ-շուտ:*

## 193. ՋԱՆԱՔ ԱՆԵՆՔ

(Աշտարակի շրջան)

Ջանաք անենք, հանաք անենք,
Յար, յար.
Գյուլա, գյուլա, լից գամբյուղը,
Յար, յար:

Բամբակ ժողվենք, քալան թողնենք,
Յար, յար,
Գյուլա, գյուլա, լից գամբյուղը,
Յար, յար,

Ջանաք անենք, յար, յար,
Հանաք անենք, յար, յար,
Գյուլա, գյուլա,
Լից գամբյուղըդ, յար, յար:

Դուշով քաղենք, յար, յար.
Փեշով տանենք, յար, յար:
Գյուլա, գյուլա,
Լից գամբյուղըդ, յար, յար:

## 194. ՔԱՂՀԱՆ ԿԱՆԵՄ ԹՈՂ Ի

(Արտաշատ գ.)

Քաղհան կանեմ թող ի, թող ի,
Վայ զորանաս, յա՛ր, յա՛ր.
Աշխատանքըդ ավեր պակըսի,
Պայմանը գուղն ա, յա՛ր, յա՛ր:

Քաղհանի բերած արտը.
Ծամըդ թափով յա՛ր, յա՛ր.
Մնացել ա բամբակի պուրակը,
Պայմանը գուղն ա, յար, յար:

Քաղհան կանեմ թըմբին, թըմբին,
Ես էլ մատաղ. յա՛ր, յա՛ր,
Իմ հերոս ու սիրուն յարի խմբին,
Պայմանը գուղն ա, յա՛ր, յա՛ր:

## 195. ԽԱՂՈՂ ՔԱՂԵԼՈՒ ԵՐԳ

(Արտաշատի շրջան)

Բողը քաղենք, խաղողը տարանք,
Զարադը, չարադը,
Ջարդենք, տըղներ, մաճառ խմենք,
Ավադը, ավադը:

Խաղող ջարդենք կարմիր շիրա,
Թող շըռշա, շըռշա,
Լցնենք կարաս, էփի, թափի,
Վըռվռա, վըռվռա:

Դե ջարդի հա, դե ջարդի հա,
Կըրնգի, կըրնգի,
Շըլցըմը դարկ, փառա, խաղա.
Տըրնգի, տըրնգի:

Խաղող ջարդենք, շիրա անենք.
Դաշտերինն գինի,
Ընենց գինի, որ խմողը
Ալբիալը ծնի:

## 196. ՅԱՐԵՔ ԷԹԱՅՆՔ ԲԸԺԱՐԻ

(Արտաշատ)

*Յարեք էթայնք բըժարի,*
*Հենց գինաս ես, տըժա՞ր ի,*
*Էլ էն ընցավ ու ընցավ,*
*Էլ մեհ չունենք դարդ ը ցավ։*

*Գամբակը չանաք ունենք,*
*Խաղ ասենք, հանաք անենք,*
*Էլ էն ընցավ…*
*Էլ մեհ չունենք դարդ ը ցավ։*

*Գամբակը քյոլ-քյոլ անենք,*
*Շատ ժողվենք, բոլ-բոլ անենք,*
*Էլ էն ընցավ…*
*Էլ մեհ չունենք դարդ ը ցավ։*

## 197. ԱՄԱՆ ԷՐՎԱ ԿՐԱԿԻՆ

(Արտաշատի շրջկենտրոն)

*Աղջի, անունըդ Շուշան,*
*Լե, լե, լե, լե,*
*Մատանիքըս քեզ նըշան,*
*Վեր ու քելե.*
*Աման, էրվա կըրակին,*
*Բավոր, թույլ տուր*
*Համնեմ իմ նըպատակին։*

## 198. ՍԻՐԵԼ ԵՄ ՅՈԹԸ ՏԱՐԻ

(Արտաշատ գ.)

*Սիրել եմ յոթը տարի,*
*Սարերի գըլխավն արի,*
*Աչքըս մեկ բոյըդ տեսնի,*
*Նոր հոգիս հանգիստ առնի։*

*Բարդու ծառին բար չինի,*
*Առանց սերի յար չինի,*
*Սիրտը որ կա շուշա յա,*
*Որ կոտրվեց, ճար չինի։*

## 193. ԶԱՆԱՔ ԱՆԵՆՔ

(Աշտարակի շրջան)

*Զանաք անենք, հանաք անենք,*
*Յար, յար.*
*Գյուլա, գյուլա, լից գամբյուղը,*
*Յար, յար:*

*Բամբակ ժողվենք, քալան թողնենք,*
*Յար, յար,*
*Գյուլա, գյուլա, լից գամբյուղը,*
*Յար, յար,*

*Զանաք անենք, յար, յար,*
*Հանաք անենք, յար, յար,*
*Գյուլա, գյուլա,*
*Լից գամբյուղըդ, յար, յար:*

*Դոշով քաղենք, յար, յար.*
*Փեշով տանենք, յար, յար:*
*Գյուլա, գյուլա,*
*Լից գամբյուղըդ, յար, յար:*

## 194. ՔԱՂՀԱՆ ԿԱՆԵՄ ԹՈՂ Ի

(Արտաշատ գ.)

*Քաղհան կանեմ թող ի, թող ի,*
*Վայ զորանաս, յա՛ր, յա՛ր.*
*Աշխատանքըդ ավեր պապիրոսի,*
*Զամանը գողն ա, յա՛ր, յա՛ր:*

*Քաղհանի բերած արտը.*
*Ծամըդ թափով յա՛ր, յա՛ր.*
*Մնացել ա բամբակի պարակը,*
*Զամանը գողն ա, յար, յար:*

*Քաղհան կանեմ թըմբին, թըմբին,*
*Ես էլ մատաղ. յա՛ր, յա՛ր,*
*Իմ հերոս ու սիրուն յարի խմբին,*
*Զամանը գողն ա, յա՛ր, յա՛ր:*

## 195. ԽԱՂՈՂ ՔԱՂԵԼՈՒ ԵՐԳ

(Արտաշատի շրջան)

*Բողը քաղենք, խաղողը տարանք,*
*Զարդաղը, չարդաղը,*
*Ջարդենք, տըղներ, մաճառ խմենք,*
*Ափաղը, ավաղը:*

*Խաղող ջարդենք կարմիր շիրա,*
*Թող շըռշառ, շըռշառ,*
*Լցնենք կարաս, էփի, թափի,*
*Վըռվառ, վըռվառ:*

*Դե ջարդի հա՛, դե ջարդի հա՛,*
*Կըրնգի, կըրնգի,*
*Շըլգըմը զարկ, փառա, խաղա.*
*Տըրնգի, տըրնգի:*

*Խաղող ջարդենք, շիրա անենք.*
*Դոշաբինն գինի,*
*Էնենց գինի, որ խմողը*
*Ալբիալը ինի:*

## 196. ՅԱՐԵՔ ԷԹԱՅՆՔ ԲԸԺԱՐԻ

(Արտաշատ)

*Յարեք էթայնք բըժարի,*
*Հենց գինաս ես, տըժա՞ր ի,*
*Էլ էն ընցավ ու ընցավ,*
*Էլ մեհ չունենք դարդ ը ցավ:*

*Պամբակը չանաք անենք,*
*Խաղ ասենք, հանաք անենք,*
*Էլ էն ընցավ…*
*Էլ մեհ չունենք դարդ ը ցավ:*

*Պամբակը քյոլ-քյոլ անենք,*
*Շատ ժողվենք, բոլ-բոլ անենք,*
*Էլ էն ընցավ…*
*Էլ մեհ չունենք դարդ ը ցավ:*

## 197. ԱՄԱՆ ԷՐՎԱ ԿՐԱԿԻՆ

(Արտաշատի շրջկենտրոն)

*Աղջի, անունըդ Շուշան,*
*Լե, լե, լե, լե,*
*Մատանիքըս քեզ նըշան,*
*Վեր ու քելե.*
*Աման, էրվա կըրակին,*
*Բավոր, թույլ տուր*
*Հանեմ իմ նըպատակին:*

## 198. ՍԻՐԵԼ ԵՄ ՅՈԹԸ ՏԱՐԻ

(Արտաշատ գ.)

*Սիրել եմ յոթը տարի,*
*Սարերի գըլխովն արի,*
*Աչքըս մեկ բոլըդ տեսնի,*
*Նոր հոգիս հանգիստ առնի:*

*Բարդու ծառին բար չինի,*
*Առանց սերի յար չինի,*
*Սիրտը որ կա շուշա յա,*
*Որ կոտրվեց, ճար չինի:*

## 199. ԿԱՔԱՎԸ ԹՌԱՎ

(Մասիս գյուղ)

*Սարին կըրակ եմ արել.*
*Կաքավը թռավ, արտերըս մընաց,*
*Արտերըս մընաց հնձելու,*
*Ուզում եմ քնեմ,*
*Վայ թե քընով ընկնեմ,*
*Իմ յարըս մնա գրկելու։*

## 200. ՉԻՆԱՐԻ ՅԱՐՈ ՋԱՆ

(Մասիս գյուղ)

*Ծիրանի ծառ՝ Չինարի,*
*Յարո ջան,*
*Աչքըս համփին է նայում.*
*Ուր որ գնաս, շատ արի,*
*Յարո ջան.*

*Աստ, ահելադ մեռնեմ,*
*Ծիրանի ծառ, Չինարի,*
*Յարո ջան։*
*Աչքըս համփին է նայում,*
*Ուր որ գնաս, շատ արի,*
*Յարո ջան։*

## 201. ԵՐԵՎԱՆՑՈՒ ՔԱՎՈՐ ԵՄ

(Մասիս գ.)

*Երևանցու քավոր եմ,*
*Երգ ասելու սովոր եմ,*
*Մի պալտո կարի, հագնեմ,*
*Սիրուն աղջիկ,*
*Եկել եմ քեզի տանեմ,*
*Բոյով աղջիկ։*

*Ես ու յարս հասակի,*
*Շաբաթն էգներ կիրակի։*
*Արի խոսք անենք մեկմեկու,*
*Սիրուն աղջիկ,*
*Արժանանանք պսակի։*
*Բոյով աղջիկ։*

## 202. ՍԱՐԵՐԸ ԼԻՍ Ա

(Մասիս գ.)

*Սարերը լիս ա, լիս ա,*
*Այ լոթի յար ջան,*
*Ա՛յ լոթի, լոթի յար ջան,*
*Բուխախըդ մարջան։*

*Ա՛յ աղա, ինձ հետ խոսա,*
*Ա՛յ լոթի յար ջան,*
*Ա՛յ լոթի, լոթի յար ջան,*
*Բուխախըդ մարջան։*

*Միրս քեզ աղջիկ չի տա,*
*Ա՛յ լոթի...*
*Ա՛յ լոթի, լոթի յար ջան,*
*Բուխախըդ մարջան։*

*Գընա հորըս հետ խոսա։*
*Ա՛յ լոթի...*
*Ա՛յ լոթի, լոթի յար ջան,*
*Բուխախըդ մարջան։*

## 203. ԱՅ ՏՂԱ, ԲԱՂՈՎՆ ԱՐԻ

(Արտաշատ, Բաղրամյան գյուղ)

*Այ տըղա, բաղովն արի,*
*Ոտներըդ շաղովն արի,*
*Մեր թաղը ղալմաղալ ա,*
*Շուտ տար, էն թաղովն արի։*

*Բաղումը կա վարդ, մեխակ,*
*Դու նըման ես արեգակ,*
*Էդ քո վառ-վառ աչքերից*
*Սիրտըս լըցվել ա կըրակ.*

## 204. ՍԱՐԻ ՄԱՐԱԼ

(Բաղրամյան գ.)

*Սարի մարալ,*
*Ջոլի ջեյրան,*
*Ջոլի ջեյրան,*
*Ես քեզի հեյրան։*
*Ասա՛, ով է էն անխիղճը։*
*Իմ սիրունիկ անուշիկ ջան,*
*Ասա, քեզ ով խլեց հանեց,*
*Քեզ ինձանից ով բաժանեց։*

*Սարի մարալ,*
*Ջոլի ջեյրան,*
*Ջոլի ջեյրան,*
*Ես քեզ հեյրան։*
*Արի, պատմիր ինչ որ լինի,*
*Սիրտս սերը ով է տարել,*
*Գիտեմ, առանց յար չես լինի,*
*Ասա՛, վերջըն ում ես ճարել։*

## 205. ՅԱՐԻՍ ԱՆՈՒՆԸ ԹԵՎՈՍ Է

(Բաղրամյան գյուղ)

*Յարիս անունը Թևոս է.*
*Յանար է յարին,*
*Ինքն էլ գյուղում հերոս է.*
*Յանար է յարին,*
*Յանար է, յանար է,*
*Յանար է յարին,*
*Էս օրվա լավ օրը*
*Հարմար է յարին։*

*Յարս միշտ ինձի հետ է,*
*Յանար է յարին,*
*Ինքն էլ լավ գրագետ է,*
*Յանար է յարին,*
*Յանար է, յանար է,*
*Յանար է յարին,*
*Էս օրվա լավ օրը*
*Հարմար է յարին։*

## 206. ԿՈՎԿԱՍԻ ՄԱՇԻՆԱ

(Բաղրամյան գյուղ)

Սարերը հովական է,
Կովկասի մաշինա:
Դու կամաց գնա,
Ախպերըս գովական է,
Կովկասի մաշինա,
Դու կամաց գնա,
Ախպորըս մի՛ տանի,
Յարը կըմընա:

## 207. ՍԱՐԻՑ ԻՋԱ ԲԵԶԱՐԱԾ

(Այգեստան գյուղ)

Սարից իջա բեզարած,
Քեզի տեսա հուս արած,
Մոտեցա, յար, դեպի քեզ,
Այգում կանգնած վարդի պես:

Աղջի, հեյրանըդ ըլեմ,
Աղջի, ջեյրանըդ ըլեմ,
Դընամ քեզ ճամփա գընեմ,
Վառ կարասըս էլ տանեմ:

Գիշեր-ցերեկ քուն չունեմ,
Քեզ համար, յար, տանջվամ եմ,
Առանց քեզ, յար, ինչ անեմ,
Կարոտից ես կըմեռնեմ:

## 208. ՊԱՐՏԵԶՈՒՄԸ ԲԱՑՎԵԼ Է ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԸ

(Այգեստան գյուղ)

Պարտեզումը բացվել է կարմիր վարդը,
Սիրուն աղջիկ, ես կըտանեմ քո դարդը,
Ծամերըդ, ծամերըդ,
Սիրուն ջան, մազերըդ,
Կամար ունքերըդ:

Քանի անգամ ձեր դռնովը անցել եմ,
Ձեռըս դըրած, ձեր դըռանը լացել եմ:
Ծամերըդ, ծամերըդ,
Սիրուն ջան, մազերըդ,
Կամար ունքերըդ:

## 209. ԳՆԱՑԵԼ ԵՍ, ԵԿԵԼ ԵՍ

(Արտաշատ, Այգեստան գյուղ)

Գնացել ես, եկել ես,
Ալ Լեյլի, ջան Լեյլի,
Բարակ բոյըդ կոխել ես,
Իմ սիրեկլի,
Բարակ բոյըդ կոխել ես,
Իմ սիրեկլի։

Երկանքը աղի վըրա,
Ալ Լեյլի, ջան Լեյլի,
Շամամը թաղի վըրա,
Իմ սիրեկլի,
Շամամը թաղի վըրա,
Իմ սիրեկլի։

Կայնել ես նավի վըրա,
Ալ Լեյլի, ջան Լեյլի,
Ջինարի ծառի վըրա,
Իմ սիրեկլի,
Ջինարի ծառի վըրա,
Իմ սիրեկլի։

## 210. ՋԻԹ ԲԼՈՒԶՈՎ

(Այգեստան գյուղ)

Աշնան բար ես, քաղցըր ես,
Ջիթ, չիթ,
Ջիթ բլուզով
Ցոլինա, յոլինա,
Հարվածային կաշխատես,
Էն չեկ աղեն
Իմ յարըն ա,
Լավըն ա։

Վըրեդ թափի վարդի ջուր,
Ջիթ, չիթ,
Ջիթ բլուզով
Ցոլինա, յոլինա,
Իմանաս՝ քըրընել ես։
Էն չեկ աղեն
Իմ յարըն ա,
Լավըն ա։

## 211. ԱՅՐՎՈՒՄ ԵՍ, ԱՅՐՎԻՐ

(Ազատավան գյուղ)

Ալ աղջի, դու ինձ համար
Այրվում ես, այրվիր,
Իմ սիրտս կրակովը
Վառվում ես, վառվիր,
Այրվում ես, այրվիր,
Վառվում ես, վառվիր,
Մեռնես, չեմ առնի, աղա,
Սիրուցըս այրվիր։

Սերըս արեցիր մոխիր,
Այրվում ես, այրվիր,
Սիրածըդ ինչու փոխիր,
Վառվում ես, վառվիր,
Այրվում ես, այրվիր,
Վառվում ես, վառվիր,
Մեռնես, չեմ առնի քեզի,
Սիրուցըս այրվիր։

## 212. ՆԱՄԱԿ ԳՐԵՄ

(Ազատավան)

*Երեք երկար տարի*
*Սերըդ սըրտիս մեջ,*
*Քեզ եմ կանչում, արի,*
*Արի հովի պես։*

*Հալածեցիր թշնամուն*
*Դու հերոսի պես,*
*Շուտ արի, սիրուն ջան,*
*Արի ու ինձ տես։*

*Նամակ գրեմ, սիրելիս,*
*Ծըտի թևով տուն արի,*
*Ամեն մի քեզ հիշելիս,*
*Սիրտըս է լալիս։*

## 213. ԵՍ ԱՂՋԻԿ ԵՄ

(Գետաշեն գյուղ)

*Լեյլիմ լե, լե,*
*Լեյլիմ լե, լե, յարս,*
*Ես աղջիկ եմ, ալ կուզեմ,*
*Լեյլիմ լե, լե,*
*Լեյլիմ լե, լե. յարս,*
*Բոյով մեջքիս շալ կուզեմ,*
*Լեյլիմ լե, լե,*
*Լեյլիմ լե, լե, յարս։*

## 214. ԵՐԵՔ ԵՐԿԱՐ ՏԱՐԻ

(Ազատավան)

*Երեք երկար տարի*
*Սերըդ սրտիս մեջ,*
*Կանչում եմ, յար, արի,*
*Արի հովի պես,*

*Վարդի պես բացվել ես,*
*Տերև ես գցել,*
*Ալ մետաքսե շալը*
